

17217

Lyons & Co

1881

369
u-23

260  
U-23

ՅԵՆՈՇՈՒՄ  
ԻՅ ՄԵԺՈՒՅԻՆ ԵՄԻՆ  
ՎՈՐՑ ԲԵՐՄԱՆԱ  
ԵՐԵՎԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

## ՀԱՄԱՐՄԱՏՈՒՄ Ի ԹԻՒՆ

ի խմբագրու  
փարոս Հանր  
ի անուշի

### ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԶՄԻՒՆԻՈՅ



1878 Մեյսիսեպտեմբեր 1—1881 Օգոստոս 18



12001

Ի ԶՄԻՒՆԻՄ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂՔԱՐՑ ՏԷՏԷՄՆ

1881

2010



# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԶՄԻՌՆԻՈՅ

1878 Մեյսիսի 1-1881 Օգոստոս 18



Ի ԶՄԻՌՆԻՍ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԱՐՑ ՏԵՏԵՄԸ

1881



**ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**

- Ե. Տեղեկագիր Քաղ. Ժողովոյ, 1 սեպտ. 1878—10 օգոս. 1879:
- Բ. Տեղեկագիր Քաղ. Ժողովոյ, 27 օգոս. 1879—18 օգոս. 1881:
- Գ. Տեղեկագիր Արժնական Ժողովոյ:
- Դ. Տեղեկագիր Տնտեսական Խորհրդոյ:
- Ե. Տեղեկագիր Ուսումնական Խորհրդոյ:
- Զ. Տեղեկագիր Դատաստանական Խորհրդոյ:



924  
45

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ԵՒ

**ՀԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ**

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՐԻՈՅ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԼՆՑ

**ԱԶԳ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ**

ԱՌ

**ԳԱՒԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ**

**ՋՄԻՒՌՆԻՈՅ**

ՍԿՍԵԱԼ Ի 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԷ 1878 ՄԻՆՁԵՒ Ց10 ՕԳՈՍՏՈՍԻ 1879

Տեճրք Երեսփոխանք ,

Պատկանելի Ժողովոյդ կողմէ ընտրուած Գաղաքական Ժողովս , որ իւր պաշտօնն սկսած է 1877 օգոստ. 3ին. այսօր իւր երկամեայ շրջանն կատարելով կը փութայ ըստ օրինի իւր համարատուութեան պարօքն ևս կատարել : Արդէն յայտ է Ձեզ որ Ժողովս իւր առաջին տարւոյ շրջանի գործողութեանց Տեղեկագիրն , հանդերձ Արժնական Ժողովոյ և Տնտ. Խորհրդոց Տեղեկագրութեամբք մատուցած է Ձեզ անցեալ տարի (3 օգոստոսի 1877 մինչ ցվերջն օգոստոսի 1878) յորում խոստացած է իւր երկրորդ տարւոյ շրջանին համարատուութիւնն ևս ժամանակին կատարել : Ուստի այժմ կը փութայ իւր խոստումը զորձադրել :

Ժողովս իւր վերջին միամեայ շրջանին մէջ 36 նիստ ըրած է , որոց մէջ կատարուած որոշումնքն ու տնօրէնութիւնքն յիշատակելու համար առանց ժամանակագրական կարգ պահելու՝ հինգ զլիար մասերու կը բաժնէ զանոնք միայն որ կրնան յիշատակութեան արժանի կարևորութիւն ունենալ , և են .

1. Աւարչական ,
2. Հանրական ,
3. Տեղական ,
4. Թեմական ,
5. Գրան յարաբերութիւնք :

1. ՎԱՐՉԱԿԱՆ

Բաղադրական Ժողովոյ անդամներէն Պ. Կարապետ Սէրճիօեան և Պ. Պօղոս Կոստանդեան Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամակցելու պատճառաւ Ժողովէս հրաժարեցան, որոց տեղ Պատկ. Ժողովոյ կողմէ սահմանադրապէս ընտրուելով Պ. Գրիգոր Զիլինկիրեան և Պ. Յակոբ Մերկերեան Ժողովոյ անդամակցեցան:

Ժողովոյ Գիւանի տարեկան փոփոխութիւնն կատարուելով Գառնիկեան Պ. Մարտիրոս Ատենապետ, ինչպէս յառաջ, և Պ. Գրիգոր Զիլինկիրեան Ատենադպիր հաստատուեցան:

Հոգաբարձութիւն Ազգ. Հիւանդանոցի. — Ժողովս 14 անդամներէ բաղկացեալ Հոգաբարձութիւն կազմեց, որոց երկուքն Հիւանդանոցի կառուցող Սպարթալեան սոհմէ ընտրեց ըստ հիման Կանոնադրի Հիւանդանոցին: Այս Հոգաբարձութեան անդամքն են.

Մեծ. Կարապետ Ա. Սպարթալեան	Մեծ. Յովհաննէս Ս. Չաբբեան
» Կարապետ Սէրճիօեան	» Ստեփան Թէստէրէճեան
» Թագուր Սըվաղլեան	» Ստեփան Չէլիկ
» Մկրտիչ Թէքպըլբեան	» Ստեփան ճէլէպեան
» Մկրտիչ Գայսէրլեան	» Պօղոս Կ. Տիւլպէրեան
» Կարապետ Արապեան	» Պօղոս Կոստանդեան
» Մ. Յովհաննէս Աւետիքեան	» Մ. Խաչատուր Աւետիքեան

Ասոնցմէ Կարապետ Ա. Սպարթալեան և մհի. Խաչատուր Աւետիքեան հրաժարուելով, Ժողովս մի անգամ ընտրեց որ է Թագուր Սպարթալեան: Որով Անդամոց թիւը եղաւ 13:

Ուսումնական Խորհուրդ. — Գաւառիս ազգային բոլոր դպրոցաց և քաղաքիս երկսեռ վարժարանաց հոգատարութիւնն ստանձնելու համար Ժողովս նախ յատուկ Բաւամական Խորհուրդ և յատուկ Հոգաբարձութիւն ընտրեց. յետոյ իմանալով որ սոյն երկու պաշտօններն միացնելով մի և նոյն անձանց համար աւելի զիւրին պիտի լինի աշխատել ազգային վարժարանաց բարւոքման համար՝ զանոնք միացոյց:

Տնօրէնական Խորհուրդ. — Տնտեսական Խորհրդոյ երկամայ շրջանն լրանալով հրաժարալիք տուած էին: Ժողովս նոյն Խորհրդոյ անխոնջ գործունէութեան մասին մեծ զոհոնակութիւն ունեւելով ջանաց համոզել և յաջողեցաւ վերընտրել զիրենք որ շրջան մի ևս շարունակեն իրենց պաշտօնն, և սոյն գործողութիւնն պաշտօնական գրով հաղորդեց Պատկ. Ժողովոյ:

Գործարանական Խորհուրդ. — Սոյն Խորհուրդն ևս իւր երկամայ շրջանն լրացուցած լինելով հրաժարուած էր: Ժողովս փութաց արիւշ պատշաճաւոր անձինք կոչել նոյն պաշտօնն ստանձնելու, և զինի յաճախ հրաժարմանց յաջողեցաւ կազմել զայն, որոյ անդամքն են.

Արժ. Տէր Յակոբ քահանայ Բէշիշեանց	Մեծ. Սարգիս Սուքիասեան
» Տէր Աւետիս »	» Ճանիկ Էլմասեան
	» Միմօն Սիմօնաքեան

Բնորոշ Ժողով. — Ժողովս տեսնելով որ Գաւառական Ժողովն խմբովին հրաժարուած՝ նոր Երեսփոխանութիւն ընտրելու մեծ պէտք կայ, Ընտրող Ժողով կազմեց. բայց և ընտրական գործողութիւններն փութացնելու համար իւր հսկողութեան ներքե կատարեց նոր Երեսփոխանական Ժողովոյ ընտրութիւնն:

Բայց ՚ի հրաժարելոց Ընտրող Ժողովոյ անդամքն եղին.

Մեծ. Կարապետ Սէրճիօեան	Ստեփան Թէստէրէճեան	Մեսրոպ Կուսպրեան
------------------------	--------------------	------------------

2. ՀԱՆՐԱԿԱՆ

Ս. Նախագահի Առաջնութիւն. — Սոյն կարեւոր խնդրոյն համար լիտէն տեղեկագրուած է Ժողովոյ Համաբառութեան նախորդ սարույ տուածին Յէ երեսը: Ժողովս գործադրութիւնը փութացնելու համար երկու քահանայ և երեք աշխարհական անդամներէ մնայուն Մասնախորհուրդ մի կազմեց: Սակայն յաճախ հրաժարմանց պատճառաւ կարելի չեղաւ դորձը արդիւնաւորել:

Մէտքեանի Խնդիր. — Նախորդ տուածին երես 6 արձանագրութեան համեմատ՝ Ժողովս ազգ. Բեռն. Պ. Յակոբ Նիկողայոսեանն իւր կողմէ փոխանորդ զրկեց ՚ի Կ. Պօլիս, և ամեն կարելի ջանքերն ՚ի գործ զննելով յաջողեցաւ վերջապէս Իզմիրի Ազգ. Հիւանդանոցին Միսքճեանէ ունեցած պահանջք 2,280 լիւրայից փոխարէն հանգուցելոյն զոյքերէն ստանալ Իզմիր Սուլթանիէ փողոց թիւ 141 քարուկիր միմերանոցը պաշտօնական վաւերագրելով հաստատեալ:

Բայ յայտանէ, Էլմասեան Պ. Սարգիսն Միսքճեանէ իւր քով աւանդ գրուած և կնքուած մի ծրարն յետ մահուան Միսքճեանի յանձնած էր Ս. Նախագահին, որ և երբ Միսքճեանի ժառանգորդք Իզմիր եկան՝ յետ պաշտօնական օրինաւոր գործողութեանց նոցա առջև բացուեցաւ և երեցաւ 210 մէճիտի գումար մի: Որ ըստ բերանայի կտակի Հանգուցելոյն առ աւանդապահն Պ. Սարգիս Էլմասեան, յանձնեցաւ ազգ. արկիլն, և Ս. Եկեղեցոյ մէջ Հոգեհանգստեան պաշտամունքը կատարեցան ՚ի յիշատակ հոգոյ բարեպաշտ Հանգուցելոյն:

Ընդ սմին յիշեալ Պ. Սարգիս Էլմասեան յայտարարեց նաև թէ իրրե Հանգուցելոյն Զմիւռնիոյ գործակատար իւր քով կը մնայ կալուածական վարձքերէ զոյացեալ 65 լիւրայի գումար մի, զոր պիտի յանձնէ ազգ. արկիլն:

Գործարանական Խնդիր. — Նախորդ տուածին երես 3 նշանակեալ: Ուսումնական Խորհուրդն ազգ. վարժարանաց օղտին համար թոշակաւորութեան գործն յօժարակամ ստանձնելէ զինի, ըստ առաջարկութեան Պ. Տեսլի՝ նոր բաշխում մի ըրաւ, սակայն յուսացած արդիւնքն չկարենալով ձեռք ձգել կրկին Ժողովոյ զիմեց: Ժողովս զինի երկար խորհրդակցութեանց յանձնեց զայն վերստին ՚ի խնամս Տնտեսական Խորհրդոյ, արածութիւն տալով նմա չափաւորել թէ անհատի մը կարողութեան աւելի գումար դանտի:

Գերեզմանաբան. — Նախորդ տուածին երես 4 արձանագրեալ: Պատկ. Ժողովոյ ՚ի պատասխանի առաջարկութեանց Ժողովոյ պաշտօնական գրով իւր վճիռն յայտնած էր որ Եկեղեցոյ անպէտ արձանագրեանց արժեքովն դերեզմանատան պարսպին և մատուռի մի շինութեան ձեռնարկուի: Ժողովս նոյն որոշումը Տնտեսական Խորհրդին հաղորդեց խոստանալով իւր աջակցութիւնն գործադրութեան պարագայից մէջ:

Ազգաբառերաց Ընկերութիւն. — Նախորդ տեսարակ երես 3: Երկուստեք ընտրուած երկերկու անձերէ կազմեալ Յանձնախումբի տուած տեղեկագիրն Պատկ. Ժողովոյ ընդունելով հաղորդած էր զայն Ժողովոյ, որոյ իմաստն էր Ընկերութեան բոլոր պահանջքն 650 լիւրա համարուելով մշանջենապէս ազգ. արկիլը մնայ, որ սկսեալ 1878 օգոստոս 1էն տարուէ տարի 8ի վրայ 52 լիւրա Ընկերութեան արկիլն վճարէ, և Ընկերութիւնն բնաւ երբևէ իրաւունք չունենայ յիշեալ 650 լիւրայն պահանջելու: Քանի որ Ընկերութիւնն կանգուն կը մնայ՝ այսպէս շարունակուի, իսկ եթէ Ընկերութիւնն զազրի՝ զազրի ընդ նմին և 52 ոսկի տարեկան վճարն, բոլոր գումարն ազգ. արկիլն մնալով: Սոյն ձեով Ժողովս և Ընկերութիւնն երկուստեք ստորագրեալ վաւերական երկու նոյնօրինակ մարհակներով դաշնակցեցան և գործողութիւնն ազգ. տուածներու մէջ արձանագրեցաւ:

Ժառանգութեանց Բաժանման Գործ. — Ժողովս տեսնելով թէ՛ ժառանգական խնդիրներ ազգ. Ժողովներն և խորհուրդներն բազմօք կ'զբաղեցնեն, ազգ. արկիլ արդարացի իրաւունք սեպեց ժառանգութեանց ամենամեծ գումարին վրայ 1 տուրք սահմանել, և զոր Պատկ. Ժողովոյ օրինաւոր գտնելով հաստատեց զայն և վաւերացոյց, և որ գործադրութեան մէջ է այժմ:

Աղբային անդէս կալուածքներ . — Տնտեսական Խորհուրդն զրով ներկայացուց ժողովոյս մի քանի ազդ. կալուածքներ որք են Բալանսը շուկայն մէկ խանութ , նոյն շուկայի խանին վերը մէկ սենեակ , Էսկի Իվմիր մէկ արտ , Օլուճախ մէկ արտ , Քորսէլիս մէկ արտ , Բէյնի խանը մէկ սենեակ : Որք անյարմար տեղեր գտնուելով ոչ միայն վարձք չեն բերեր , այլ նաև իրենց տրոց և նորոգութեանց ծախքն ալ ազդ. արկղին լոկ փասս մի է : Ասան որոյ ժողովս Տնտեսական Խորհրդոյ համամիտ՝ պատշաճ սեպեց վաճառել զանոնք և արժէքովն ուրիշ կալուածք գնել որ արդինաւոր լինին : Պատկ. Ժողովդ սոյնը օրինաւոր գտնելով՝ վաւերացուցած և գործարարութիւնը զրով հրամայած էր մեզ : Սակայն Տնտեսական Խորհուրդն նպատաւոր առիթի կ'սպասէ որչափ կարելի է՝ լաւ գնով վաճառել զանոնք :

Աղբային Հիւանդանոց . — Նախորդ տետրակ երես 4 , Պատուարժան Հոգարարձութեան ջանասիրութեամբ շքեղ կերպիւ կատարուեցաւ նորաշէն Հիւանդանոցի բացման հանգէսը յունուար 14 կիրակի արանց և յունուար 17 չորեքշաբթի կանանց համար : Ազդ. Աւարչութիւնս իւր ամեն ճիւղերով յատուկ պաշտօնական նամակաւ ազդային ընդհանուր երախտադիտութիւնը մատոյց առ բարեբար կառուցողս Ազդ. Հիւանդանոցին Սպարթալեան Ասեմ. Յակոր և Յովհաննէս Էֆէնտիներն : Սոյն երախտադիտութեան իբրև յայտարար արդինք՝ Քաղաքական Ժողովս երկու անգամ յատուկ նամակներով խնդրեց Ս. Պօլսոյ Ամենա. Ս. Պատրիարքէն որ Սպարթալեան Ասեմ. Յակոր Էֆէնտիի Մէճիտի կարգի երկրորդ և Յովհաննէս Էֆէնտիի երրորդ շքանշաններ շնորհուին Նորին Այստեղական Ա. հաստատութեան կողմէ :

Աղբային Զոր շէն . — Տնտեսական Խորհրդոյ առաջարկութեամբ և ժողովոյս որոշմամբ Շահին խանի կից գետնոյն վրայ կառ. ք պահպանելու խան մի և փողոցին վրայ չորս խանութ շինուեցան :

Ս. Նախագահի Եղևորութիւնն 'ի Ս. Էջմիածին . — Երեսփոխանական Ժողովոյդ որոշմամբ գաւառիս Առաջնորդ Ս. Հոյրն Եպիսկոպոսութեան աստիճանն ընդունելու համար Ս. Էջմիածին ուղևորելու ժամանակ՝ Ժողովս պաշտօնական նամակաւ խնդրեց Ամեն. Ս. Պատրիարքէն որ մեր Գեր. Առաջնորդ Ս. Հօր Մէճիտիէի երկրորդ կարգի շքանշանը շնորհուի Նորին Այստեղական Ա. հաստատութեան կողմէ :

Նոյնպէս Նորին Գերապատուութեան ուղևորութեան ծախսոց համար Ժողովս 100 օսմանեան ոսկի Տնտեսական Խորհրդոյ միջոցաւ յանձնել որոշեց . բայց Տնտեսական Խորհուրդն նոյն գումարը մատուցած ժամանակ՝ Նորին Գերապատուութիւնն վեհանձնութեամբ չուզեց ընդունիլ , յայտ առնելով թէ՛ ազդ. արկղին անձուկ վիճակին կը խնայէ , և թէ՛ աւելի գոճ կը լինի իւր անձնական ծախիք և չափաւորութեամբ կատարել ուղևորութիւնը :

Աղբային Զոր . — Սահմանադրական օրինաւորութեանց պահանջածին համեմատ Ժողովս հարկ համարեց իմանալ քաղաքիս ազդայնոց ընդհանուր թիւը , վասնորոյ և Գիւանատան միջոցաւ ազդահամարի ձեռնարկել որոշեց :

Հայաստանի Քարէնարդուս . — Սոյն խնդրոյն վերաբերեալ պատրիարքական Երջարերական Պատկ. Ժողովդ յատուկ զրով հաղորդած էր Ժողովոյս որ ինքնին կամ Յանձնախմբի մը միջոցաւ խնդրուած ծրագիրը պատրաստէ հաղորդելու համար Պօլիս հաստատուած Խորհրդարանական Յանձնախմբին :

Ժողովս փութացաւ յատուկ Յանձնախմբ մի կազմել , և Երջարերականի մէն մի օրինակով ներքակեալ գիր յուղարկեց իւրաքանչիւր թեմերու որ Երջարերականին իմաստից համեմատ զրով բանակցի դատարիս այս նպատակաւ կազմուած Յանձնախմբին հետ :

Աղբային Ելուստոց . — Տնտեսական Խորհրդոյ կողմէ պատրաստուած նոր շրջանի ազդային սխեմէին և Ուս. Խորհրդոյ կողմէ տեղեկագրեալ երկու վարժարանաց տարեկան ծախսոց մէջ հաւասարակշռութիւն գոյացընելու անօրինութեան համար նոյն երկու տեղեկագրութիւնք առ Պատ. Ժողովդ յուղարկած է Ժողովս :

3. ՏԵՂԱԿԱՆ

Ժողովս յաջողած է ազդայնոց մէջ տեղի ունեցած բաւական կնճաղի վէճեր և խնդիրներ լուծել , որոց մէջ յիշատակութեան կարևորութիւն ունեցողներն են .

Ս. Աղազարեան Պ. Նիկողայոսի և իւր հանդուցեալ Յովհաննէս եղբօր կնոջ Մարիամի մէջ եղած ժառանգական խնդիրն , որոյ վերջանալէն զինի Մարիամ իւր կալուածներն Ազդ. Հիւանդանոցին կտակեց մինչև իւր մահը վայելելու պայմանաւ :

Ալիւրճեան Պ. Յակոբայ իւր աներորդի Պ. Մանուէլին հետ ունեցած ժառանգական խնդիրն Ժողովս իւր կողմէ վերջացուցած և բաժանադիրն պատրաստած է , միայն երկու կողմանց համաձայն հաւանութիւնն կը մնայ :

Հանդուցեալ Սիւրիւճի Պ. Գալուստի ժառանգական գոյից բաժանման կ'աշխատի Ժողովս և կը յուսայ 'ի մեծոյ վերջացընել զայն :

Կ. Պօլսոյ Եէնի գարուի երկսեռ վարժարանաց 'ի նպաստ՝ Իզմիրի մէջ վիճակահանութեան գրուելու նպատակաւ տեղոյն Թաղական Խորհրդոյ կողմանէ ղրկուած աստիճանագրեալ վանդակ մի Ժողովս քահանայի մը և նոյն վանդակի բերող Պ. Միհրանի ձեռամբ շրջադայել տալով , 180 բաժնէտոմս կարելի եղաւ ծախուիլ , և որոց ստակն ստանալով Պ. Միհրան մեկնեցաւ 'ի Պօլիս :

4. ԹԵՄԱԿԱՆ

Գաղատիոյ թեմ՝ Ազգէհիբի ազդայինք փափաքելով Զմիւռնիոյ վիճակակցութեան մէջ մտնել , երկու բաղմատորազիր հանրադրութիւնք կ'ուղղեն մին առ Ազդ. Պատրիարքարան , միւսն առ Գեր. Ս. Առաջնորդն մեր : Պատրիարքարանն նկատողութեան առնելով հանրադրին պատճառաբանութիւնքն և օրինաւոր գտնելով զայն՝ կ'որոշէ , և իւր որոշումն կը հաղորդէ Ազդ. Աւարչութեանս ուրոյն կոնդակաւ ուղղեալ առ համայն Ազդայինս Ազգէհիբի : Այսպէս՝ Ազգէհիբ աւելցած է այժմ Զմիւռնիոյ թեմերու կարգին մէջ :

Թաղական Խորհուրդ . — Թեմերու մեծագոյն մասին մէջ Թաղական Խորհրդոց յաճախ հրամարմանց պատճառաւ Ժողովս յոյժ կը նեղուէր նոցա դարման բերելու : Համայն և այնպէս Ժողովս յաճախ յորդորական գրութեամբք բաւական յաջողեցաւ , և Մանիսա , Էօտեմիշ , Գընըզ , Քըրքաղաճ , Գարաթաշ և այլն Թաղական Խորհուրդներն առ այժմ բաւական օրինաւորութեամբ կը շարունակեն իւրեանց պաշտօնն :

5. ԳՐԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԷ

Քուշաթայի ազդ. կալուած Չարտաք խահվէի դատին համար թաղրիւր տրուած է Կառավարութեան , հաստատելով թէ՛ յիշեալ կալուածն տեղոյն Հայոց եկեղեցւոյն և Իզմիրի Ազդ. Հիւանդանոցին օրինաւոր սեպհակաւորութիւնն է վաւերական թուղթերով հաստատեալ :

- Նոյնպէս թաղրիւրներ տրուած են .  
Մարիամ Մուրատեանի ամուսնական դատին համար :  
Քուշաթայի մտավաճառի խանութին համար :  
Ազդային կալուած Հեռագրատան անվճար մնացած վարձը ստանալու համար :

Թողովս երկարորէն զբաղեցաւ նաև Գոթալիոյ հպատակ վէնթուրա հրէին յարուցած ապօրինի դատով : Յիշեալն որոյ տունն կից է Ազգ. Հիւանդանոցին , կը ջանայր իւրացընել ազգ. նոյն սեպհականութեան մի քանի կանգուն ամենակարևոր գետինն պատճառարանելով որ թէև իւր կալուածարոյն մէջ յիշատակուած չէ յիշեալ գետինն , բայց ինքն տարիներէ 'ի վեր 'ի գործ դրած է զայն իբրև հանոց և իբրև անխանոց : Թողովս յետ բազում ճշտոյն և թղթակցութեանց ընդ Տեղական Կառավարութեան յաջողեցաւ ձեռք բերել յիշեալ յափշտակուած գետինն և Հիւանդանոցի պարսպապատին մէջ անցունել :

Քաղաքական Թողովս իւր նախընթաց տարւոյ համարատուութեան մէջ (երես 9) խոստացածին համեմատ՝ առաջին կատարելով իւր վերջին տարւոյ պաշտօնավարութեան շրջանի համարատուութիւնն ևս , իւր հրաժարականն կը մատուցանէ Պատկ. Երեսփոխանութեանդ , քաջայոյս մնալով որ իրեն յաջորդող նորընտիր Քաղաքական Թողովն ազգային վարչական գործերն կանոնաւորութեան մէջ գտնելով պիտի յաջողի աւելի զիւրութեամբ վարել իւր պաշտօնն յոյուտ Ազգին որում 'ի բոլոր սրտէ փափաքելով մնամբ :

**Ա.Զ.Գ. ԲՅԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Ընդ նախագահութեամբ Գեր. Առաջնորդ Ս. Հօր

- Արեւոյեայ ԽԱՐՏԻՐՈՍ ԳԱՌՆԻԿԵԱՆ
- Արեւաբայի ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
- ՊՕՂՈՍ Կ. ՏԻԼՊԵՐԵԱՆ
- ՊՕՂՈՍ Յ. ՏԻԼՊԵՐԵԱՆ
- ՄԿՐՏԻԶ ԵՍԸՅԵԱՆ
- ՅԱԿՈԲ ՄԵՐԿՆԵՐԵԱՆ

Զմիւռնիա, 10 օգոստոս 1879.

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ԵՒ

**ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

ԵՐԿԱՄԵԸՅ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԸՆՅ

**Ա.Զ.Գ. ԲՅԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ**

ԱՌ

**ԳԱՒԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ**

**ԶՄԻՒՌՆԻՈՅ**

ՍԿՍԵԱԼ Ի 27 ՕԳՈՍՏՈՍԷ 1879 ՄԻՆՁ ՅՎԵՐԶ ՕԳՈՍՏՈՍԻ 1881

Տեարք Երեսփոխանք ,

Պատկառելի Թողովոյդ , 1879 օգոստոս 22 , ժ. Գոթալիոյ մէջ ընտրուած Ազգ. Քաղաքական Թողովս , իր երկամայ շրջանին մէջ 192 նիստ ըրած է , և 495 հայերէն և 100ի չափ տաճկերէն թագրիբեր և նամակներ գրած է : Իր գործողութեանց օրինաւոր արձանագրութիւնքն կան Ազգ. Գիւանատան մէջ , որոց հետեւեալ համաւտար զիժ պատկերն 'ի զիւրութիւն՝ դասակարգուած է սոյն բաժանմունքով .

1. Վարչական ,
2. Հանրական ,
3. Տեղական ,
4. Թեմական ,
5. Դրան յարաբերութիւնք :

**1. ՎԱՐՉԱԿԱՆ**

Թողովս իր առաջին նստին մէջ Գիւանն կազմեց , և նախորդ Թողովոյն որոշման համեմատ՝ ինքն ևս արժան համարեց որ ազգ. կնքոյն կէսն Ս. նախագահին , և միւս կէսն իւր Ատենապետին քով մնան , որոշմամբ որ միայն Թողովոյս ներկայութեան կնքուին որ և իցէ գրութիւնք և վաւերացմունք :

Նախորդ ժողովներէ ընդունուած և ՚ի գործ դրուած Արեւիկան Կանոնադրէն ժողովս յարմար դատեց իրեն հասարակ ևս գործադրութեան դնել, Իր նստի օրերն որոշեց լինել ամեն երկուշաբթի և հինգշաբթի օրեր ժամը 4ին սկսելով: Տարիէ մը զինի հինգշաբթի նիստն չորեքշաբթի փոխեց:

Կալուածական վկայագրութիւններն վաւերացնելու համար հարկ համարեց ժողովս, որ Գիւանատան այն պաշտօնեայն որ ւտորագրութեանց ինքնադիր լինելն անձամբ ստուգած է, պարտաւոր լինի յատուկ պատրաստուած տոււարի մը մէջ ստորագրել ինքն զանոնք ստուգած լինելն հաստատելով:

Կարևոր համարեց ժողովս որ ազգ. կալուածոց հէօճէթներն կամ քօչաններն յատուկ տոււարի մը մէջ ճշգրութեամբ ընդօրինակուին հայերէն գրով: Նաև յատուկ տոււար մի հաստատել, որուն մէջ արձանագրուին ՚ի բնէ անտի Զմիւռնիոյ ազգային հաստատութեանց նուիրատու Բարերարաց անուանքն և տուած նուէրներուն տեսակները:

Երեսփոխանական և Գաղաքական ժողովոց Խորհրդարանին մէջ ժողովս պատշաճաւոր գրասեղան պատրաստել տուաւ այնպիսի դրիւք որ Երեսփոխանական ժողովն նստի օրերն ընդարձակել և Գաղաքական ժողովն նստի օրերն սեղմել կարելի լինի:

Ժողովս վաւերացուց Գիւանատան բացման և փակման ժամերն և պաշտօնէից պարտաւորութիւններն ճշգրտութեամբ քաղկացեալ Կանոնադիր մի, և Գիւանատան մէջ արձանագրել տուաւ զայն:

Ժողովս տեսնելով որ Ազգ. Գիւանատան գործողութիւնք շատ են, որոշեց որ Գիւանապետն ամբողջ օրը Գիւանատան մէջ զբաղի: Եւ որովհետև Գիւանապետն ամեն օր առտուրնէ մինչև կէսօր Մեսրոպեան վարժարանին մէջ ուսուցչութեան պաշտօն կը վարէր, ժողովս նամակ ուղղեց առ Ռուսիական Խորհուրդն որ ուրիշ դասատու դասեն, որ և կատարուեցաւ տարւոյս Ապրիլ ամսոյ մէջ:

Ժողովս նկատելով որ Գիւանատան պաշտօնէից մէջ աւելորդներ կան, խնայողութեան համար անոնցմէ մի քանին արձակեց:

Սոյն երկամսայ շրջանին մէջ ժողովոյս անդամներէն Պ. Յակոբ Մերկերեան քաղաքէս յաճախ բացակայութեանցը պատճառաւ չիրնալով կանոնաւոր կերպիւ նիստերու ներկայ գտնուիլ, հրաժարուած էր. Պ. Գրիգոր Չիլինկիրեան նոյնպէս անցեալ տարւոյ Յունիս ամսոյ 1էն, իսկ Պ. Մարտիրոս Բարազեան սոյն տարւոյ Յունիս 10էն հրաժարուած էին:

Ժողովս զբաղեցաւ նաև թեմական Երեսփոխանաց ընտրութեան և յաջողելով հաղորդեց Պատկ. ժողովոյդ թեմական Երեսփոխանաց անուանքն, որոց ընտրութիւնն իսկ վաւերացաւ:

Գիւանի տարեկան փոփոխութեան ժամանակը հասնելուն՝ ժողովս իւր Ատենապետի և Ատենադպրի խոհականութեան և գործունէութեան վրայ վստահ՝ փոփոխութեան հարկ չտեսաւ, այլ միամսայ շրջանի լրման առթիւ միաձայն հաւանութեամբ վերընտրեց իւր Գիւանի անդամներն:

Ժողովս որոշեց որ իւր շաբաթական երկու նիստերէն մին այն է չորեքշաբթի օրերն ազգային ներքին գործերով զբաղի, իսկ մյուսն այն է՝ երկուշաբթի ժողովրդեան գործերն անօրինէ:

Ազգ. Հիւանդանոցի ներքին Կանոնադիրն, որ նախորդ վարչութենէ պատրաստուած՝ այլ չէր վաւերացած, ժողովս վերաքննելով ինչ ինչ փոփոխութիւններով ընդունեց և վաւերացնելով յանձնեց Հողարարութեան ՚ի գործադրութիւն:

Ժողովս իւր պաշտօնի սկիզբէն ազգ. վարժարանաց օգուտն իւր մտադրութեան առարկայն ընելով, իւր առաջին նստին մէջ Ռուսիական Խորհուրդ կազմեց, որոյ անդամքն են Մեծ. Յովհաննէս Չաբրեան, Կարապետ Արապեան, Խաչատուր Արապետեան, Ղուկաս Եսայեան և Սարգիս Սըվազեան: Սոյն Խորհուրդն իւր պաշտօնական շրջանին սկիզբէն հրաժարողներ և նոցա յաջորդողներ ունելով և չիրնալով յարատեւել՝ խմբովին հրաժարեցաւ: Յետ որոյ ժողովս նոր Ռուսիական Խորհուրդ կազմելու համար որքան որ աշխատեցաւ, յատուկ նիստեր զօհեց պատշաճաւոր անձեր գտնելու, ընտրելու և հրահրագրեր ուղղելու, դժբաղդաբար անոնցմէ իւրաքանչիւրն մի զկնի միոյ գրով կամ անդիր հրաժարուեցան, որք են Մեծ. Յարութիւն Ահարոնեան, Սարգիս Սըվազեան, Յակոբ Ա. Կանոն, Ազատ Արեւիկեան, Կարապետ Օէրճիօսեան, Խաչատուր Զաքիեան և Թադեոս Առաքելեան: Զկնի սոցա

Մեծ. Պօղոս Յ. Տիլպէրեան, Յովհաննէս Չաբրեան և Մեսրոպ Սիմօնեան Ռուսիական Խորհրդոյ պաշտօնն սիրով ընդունեցին, և ժողովոյս փոփոխանաց համեմատ ազգ. վարժարանաց օգտին համար կ'աշխատին: Ասոնցմէ Պ. Պօղոս Յ. Տիլպէրեան հրաժարելով ժողովս ընտրեց Պ. Յովհաննէս Մաքսուտօֆ և Պ. Յակոբ Ա. Կանոն:

Նոյնպէս Գատատանական Խորհրդոյ անդամներ ընտրուելով մի զկնի միոյ հրաժարողներ եղան, որք են. Մեծ. Յակոբ Գարագաշեան, Յակոբ Հայրապետեան, Ալեքսան Բրբրէսեան, Ստեփան Չաբրեան, Նուրիճան Տէրվիշեան, իսկ Արժ. Տէր Յակոբ Քէշիշեանց և Տէր Ա. Ետիս քահանայք և Մեծ. Սարգիս Սուքիասեան, Ճանիկ Էլմասեան և Սիմօնաքի Ստեփանեան սիրով ընդունելով նոյն պաշտօնն շարունակեցին:

2. ՀԱՆՐԱԿԱՆ

Ազգային վարժարան. — Պատկ. ժողովը 1879 օգոստոս 30 թիւ նամակաւ հաղորդած էր ժողովոյս հեռակալ որոշումներն. Ա. Ազգ. վարժարանաց համար մի նախնական ծրագիր, Տեսչի և երաժիշտ դասատուի ծախքն ՚ի միասին հասարակ ստակ 120,000 դահեկան սահմանելով: Բ. Թոշակները կարող ծնողներէ պահանջել, և վճարել չկամեցողներու զաւակներն չընդունիլ ՚ի գարոցս: Գ. Հաւաքեալ թոշակաց դոււարն պահել յաջորդ տարուան համար որ ՚ի գործ դրուի ՚ի զարդացումն նախնական դպրոցացս:

Ժողովս թէև համոզուած էր որ ազգ. վարժարանաց գրութիւնն նախնական ծրագրի իջեցնելն լաւ չէ, թէև յայտնի կ'իմանար որ հասարակ ստակ 120,000 դահեկանի մուտքն անհնարն է ազգ. վարժարանաց ամենակարևոր պէտքն մինչև անգամ վերջին աստիճանի խնայողութեամբ ընուլ, բայց և այնպէս ըստ օրինի հաղորդեց նոյն որոշումը և ծրագիրն Ռուսիական Խորհրդոյն ՚ի գործադրութիւն: Սակայն Ռուսիական Խորհուրդն 1879 նոյ. 5 թիւ նամակաւ յայտարարելով թէ վերջիշեալ գրութեամբ ազգ. վարժարաններն վարելու փորձին մէջ չեն կրցած և չպիտի կարենան իսկ յաջողիլ, վասնորոյ որոշած են մի քանի ուսումներու և անդիներէն լեզուի դասատուութիւնն, և աղքատիկ ուսանողաց զրական սիտոյից ձրի մատակարարութիւնն և արժանաւոր Տեսչի մը հաստատութիւնն աւելցնելով հասարակ ստակ 150,000 դահեկանի հասցնել տարեկան ծախքն: Ժողովս հարկ համարեց ըստ օրինի Ռուսիական Խորհրդոյ նոյն ծրագիրն Պատկ. ժողովոյդ ներկայացնել հանդերձ զխտորութեամբ որուն և Պատկ. ժողովը հաւանութիւն տուաւ և հաստատեց, որ և վարչութիւնս ՚ի գործ դրաւ:

Ազգ. կրկին վարժարանաց Տեսչութեան պաշտօնն վարելու համար Ռուսիական Խորհուրդն ընտրած էր զՊ. Մ. Մամուրեան և ժողովոյս առաջարկած: Ժողովս իւր հաւանութեամբն հաստատեց սոյն ընտրութիւնն:

Արուեստանոց. — Պատկ. Երեսփոխանութեանը կողմէ 1879 նոյեմբեր 8 զիրն կը ծանուցանէր թէ Մեծ. Կարապետ Արապեան Երեսփոխանական ժողովոյ մէջ խոստացած էր իւր ծախիւք Արուեստանոց մի հաստատել Մեսր. վարժարանի աշակերտաց համար, և զայն անօրինել կը պահանջէր: Ժողովս փութաց վարժարանին կից ազգային գեանոցն վրայի տնակները քակելով Արուեստանոցի համար տեղ պատրաստել, և Մեծ. Կարապետ Արապեանի հետ բանակցելով պատշաճ տեսաւ հիւանութեան և կօշկակարութեան դասեր հաստատել: Նաև Մեծ. Կարապետ Արապեանի առաջարկութեան վրայ Ռուսիական Խորհրդէն գրով խնդրեց ցուցակ մի որ պարունակէ Արուեստանոց յաճախելու աշակերտաց թիւը, տարիքը, օրուան ժամը, և ծնողաց հաճութիւնն առնուած լինելը և այլն: Ժողովոյս սոյն զիրն անպատասխան մտացած էր Ռուսիական Խորհուրդներու յաճախակի հրաժարմանց պատճառաւ, և Արուեստանոցի խնդիրն կրկին յուզուելով այս անգամ կրկին զիր ուղղուեցաւ առ Ռուսիական Խորհուրդն:

Գարոցային թոշակ. — Ժողովս սոյն տրոց հաւաքումն, ըստ որոշման Պատկ. ժողովոյդ՝ արդիւնաւորելու համար երկար նիստերով զբաւեցաւ, յայտարարութիւններ հանեց ժողովրդեան, Տեսչական և Ռուսիական Խորհրդոց հետ խորհրդակցեցաւ, վճարելու գծկամակ ծնողաց հետ խօսեցաւ, շատերը համոզուելով վճարեցին. ոմանց զանդատներն ուշագրութեան առնելով նոցա զիւրութիւններ տուաւ, և վերջապէս ժողովրդեան կարողութիւնը ճա-



նաչող մի քանի քահանայից խորհրդակցութեամբ բաշխման աստիճանները փոխեց աւելի յարմարցնելով կարողութեան իւրաքանչիւր ծնողաց :

Աստուծական Խորհրդոյ Տեղեկաբէլը . — Աստուծական Խորհուրդն իւր Տեղեկապետ մի քանի կարևոր պէտքեր կ'առաջարկէր դպրոցաց համար , որոց մէջ Աղջկանց համար ընդարձակ վարժարանի մը կարևորութեան խնդիրն ժողովս Պատկ. Երեսփոխանութեանդ ատենը հանած է :

Աղջկան Էկոնոմիկ . — Հիւանդանոցի Տեսուչ Արժ. Մակար Աարդապետ Բարխուդարեանց հրաժարուելէ զինի , Կ. Պօլսէն Արժ. Ալէքսան Աարդապետ Աւնճեան Հիւանդանոցի Տեսչութեան պաշտօնն ստանձնելու իւր փափաքն գրով առ Աւեմ. Սպարթալեան էֆէնտիս յայտնած , և Սպարթալեան էֆէնտիք յիշեալ զիրն և անօրէնութիւնն ժողովոյս յանձնած լինելով , ժողովս գրով հրաւեր կարդաց և Արժ. Ալէքսան վարդապետն քաղաքս դալով իւր փափաքած պաշտօնին կարգեցաւ : Սակայն փոքր ժամանակ զայն վարելէ զինի մեկնեցաւ 'ի Կ. Պօլսիս : Իսկ Հիւանդանոցի Տեսչութեան վերաբերեալ գործերն առ ժամս Պատ. Հոգաբարձութիւնն իւր եռանդուն գործունէութեամբ կը ընու , որու անդամքն են Մեծ. Մելքոն Մաքսուտեան , Գալիթ Հէրիսճեան , Ստեփան Փանոսեան և Յակոբ Սէրայտարեան :

Խնամակալութիւն . — Նախորդ Խնամակալութի Տիկնայք Իսկուհի Խ. Աղազարեան , Սրբուհի Խ. Աւագեան և Մարգարիտ Յ. Աղաճանեան իրենց պաշտօնն խիստ արժանաւորութեամբ կատարելէ զինի հրաժարուելով , ժողովս շնորհակալեաց զիր ուղղեց առ Նոսա , և նոր Խնամակալութի ընտրեց , որք են Երէջկին Տէր Աւետիս քահանայի , Նունեա Յ. Թովմեան , Եղիսաբէթ Պ. Գաղտաղեան և Տուտու Յ. Մէլիքեան :

Պատ. Ժողովոյդ որոշման համեմատ վարչութիւնս Հիւանդանոցի և Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ տարեկան տեղեկագիրն ու մանրամասն հաշուեցոյցներն յանձնած է 'ի նկատողութիւն ժողովոյդ :

Աղջկան Կալուստի . — Հանգուցեալ Սահաթի Սիմօնեան Գրիգորի Մահմուտիէ փողոց ունեցած խանութիւն զետիւնն 'ի կենդանութեան իւրում Պէլեպիէի կողմէ գնուած , և արժէքն 100 լիւրա յիշեալ Գրիգորի կողմէ Ազդ. Հիւանդանոցին կտակուած լինելով , ժողովս սոյն գումարն զանձելու համար ամեն կերպ աշխատանք չըլցացաւ . սակայն զեռ չյաջողեցաւ ազդային սոյն իրաւունքն ձեռք ձգել :

Հանդուցեալ Երէջեան Աւետիս աղա Բուշէն փողոց իւր մէկ տունն և ներքեի կէս մասուրա Գէօրրիւլի օղտու ջրով աղբիւրն Ազդին տուած էր , բայց քօչանն չէր կատարուած : ժողովս նորա որդւոյն Մեծ. Կիրակոս աղայի հետ բանակցելով յիշեալ տան և աղբիւրին յանուն Ազդին վաճառուիմը պաշտօնական քօչանով հաստատել տուաւ :

Քաղաքիս Եւմիշ չարժը շուկայն գտնուած ազդ. մթերանոցն , որ ըստ կտակի Գարահիսարցի հանգուցեալ Հօպճեան աղայի 'ի մասին 4ը Գարահիսարի Հայոց եկեղեցւոյն և 1ը Իզմիրի Հայոց եկեղեցւոյն կալուածք է , տարիներէ 'ի վեր օտարաց ձեռք մնացած վարձքն չաւնուելուն , և կալուածական տուրքն և գետնի վարձքն Իզմիրի ազդ. արկղէն արուելուն , ժողովս Գարահիսարի Ազդ. վարչութեան հետ բանակցեցաւ , բայց տեսած անտարբերութեան վրայ որոշեց տիրանալ նոյն կալուածքին , վարձու տալ , և ծախքերն և 1/3 մասը ազդ. արկղին պահելէ զինի աւելցածը Գարահիսարի վարչութեան յանձնել :

Յառաջագոյն Ազդին անուան հէօճէթ եղած Սիրիճեան անուն տան համար , Պատ. Երեսփոխանութեանդ որոշման համեմատ ժողովս բանակցեցաւ կտակողին որդւոյն հետ որ Ազդ. վարչութեան վարձու բռնէ զայն , կամ տունը յանձնէ Ազդին : Բայց ժողովոյս ամեն ջանքն 'ի զերեւելան մինչև ցարդ :

Ֆէթհիէ փողոցի ազդ. տան վարձակալն կանոնաւոր վճարումներ չընելուն , հարկադրեցաւ ժողովս կառավարութեան միջոցաւ տունը պարպել տալու որոշում ընել :

Նոր Գերեզմանատան պարիսպներն Տնտեսական Խորհրդոյ հսկողութեամբ շինուելէ զինի ժողովս գերեզմանատան բաժանմանց և ծառուղեաց և շինուելիք մատարան մի տեղագրական յատակագիծն պատրաստել տուաւ :

Պայտուորի Թաղական Խորհրդոյն յայտարարութեան համեմատ Թիբէի վաղեմի ազդային գերեզմանատեղին մէջ (ըստ որում Թիբէ Հայ մնացած չէ) Յոյն վարձակալ մի աղեսագործութիւն կ'ընէր տարեկան վարձք մի վճարելով Պայտուորի Ազդ. վարչութեան : Բայց տեղոյն կառավարութիւնն զրաւել ուզելով նոյն տեղն վարձակալն վաճարել էր : ժողովս սոյն խնդրոյն համար բանակցելով Խաթէի ժողովի հայ անդամին հետ՝ հրահանգ տուաւ Պայտուորի Թաղական Խորհրդոյն որ տեղացի տաճիկ և յոյն երեւելեաց ստորագրութեամբ հանրագիր պատրաստեն 'ի հաստատութիւն նոյն տեղոյ Հայ ազդին վաղեմի գերեզմանատեղի լինելուն : Նաև թագրի արուելով՝ հրամանադիր աւնուեցաւ տեղոյս կառավարէն և զբնակեցաւ Պայտուորի Թաղական Խորհուրդն որ հրամանագրին համեմատ տէր լինի ազդային վաղեմի գերեզմանատեղոյն :

Միսրճեանէ մնացած 65 լիւրա ազդ. արկղի պահանջքն , որ աւանդ կը մնար Ելմասեան Մեծ. Սարգիս աղայի քով , 'ի լիւրա բանուած տոկոսով 70 լիւրա վճարեցաւ ազդ. արկղին , որով սոյն հաշին փակեցաւ :

Հաճըլարցի Եղիսաբէթ անդուակ տյրի Տիկնայք Հաճըլար ունեցած կէս տունն և Պօղաղ քէտէր ունեցած 20 ձիութենիներն Պուրնապատի եկեղեցւոյն տուած ըլլալով , քօչաններն յանձնած էր տեղոյն եկեղեցւոյնն որ պաշտօնական ֆէրաղի գործերն կատարէ Եկեղեցւոյն անուան դարձնելու համար : ժողովս տեղեկանալով թէ չէ գործադրուած , հետամուտ եղաւ , և իմացուելով թէ Եղիսաբէթ Նիֆ գացեր է ուրկէ սեպտեմբերի վերջերը պիտի դառնայ , որոշեց այն ատեն սոյն վաճառուիմը գործադրել :

Սիմօնաբեան տան կալուածագրի մասին ժողովս Պատկ. Երեսփոխանութեանդ որոշման համեմատ 1870 զեկտ. 1 թուականը կրող ազդ. կալուածագիրն փոխելու և միայն 444 քառակուսի կանգուն կէտիկ տեղոյ համար նոր կալուածագիր տալու մինչ կը պատրաստուէր՝ յիշեալ տեղոյ կէտիկութիւնն զնել ուզող անձին առաջարկն ժողովս աւելի նպաստաւոր դտնելով 21 լիւրայի վաճառեց զայն և խնդիրն վերջացուց :

Սուրբ Ելմիշի . Աւեհ. Կաթողիկոսն կոնդակաւ նոր գործակալն մը ընտրութիւնն առաջարկած լինելով , ժողովս Պ. Ստեփան վարպետեանը արժանաւոր դատեց և սոյն ընտրութիւնն Աւեհ. Կաթողիկոսին տեղեկագրեց : Նորին Բարձր Սրբազնութիւնն յատուկ օրհնութեան կոնդակաւ հաստատեց նորընտիր գործակալն , և կոնդակն հանդիսապէս կարդացուեցաւ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ մէջ : Նորընտիր գործակալն 'ի գործ ձեռնարկելով Սր. Ելմիշածնի քաղաքիս մէջ ունեցած արդեանց հին հաշուոց քննութեան զաղեցաւ , սակայն երկար ժամանակէ 'ի վեր յիշեալ հաշուոց յատուկ վերակացութիւն պահելուն ազդ. արկղի հաստից հետ խառնուած և շփոթուած էին անոնք , որ և յատուկ գրով Աւեհ. Կաթողիկոսին ծանուցուելէ զինի , Նորին Բարձր Սրբազնութեան հրամանաւ հին հաշիւներն փակեցան և նոր ու կանոնաւոր հաշիւք սկսան 1879 Յուլիս 1էն : Նորընտիր գործակալն գրով յայտնած լինելով ժողովոյս Աւեհ. Կաթողիկոսի հրամանն , որ է յանուն Ս. Ելմիշածնի՝ Եկեղեցեաց մէջ գանձանակ շրջաբերելոյ դադարեալ սովորութեան տեղ Եկեղեցւոյ դրան քով մնայուն գանձանակ հաստատել . ժողովս արտօնութիւն տուաւ գործակալին որ պատշաճ գանձանակներ դնէ :

Աղջկան Կաթողիկոսի քէտի վարձքերէ բահանայի իրաւունքն . — Արժ. քահանայք գրով խնդրած էին որ ազդ. կէտիկներու գետնի վարձքերէ իրենց յատկացեալ մասը , որ 1845ի հրդեհէ 'ի վեր չէին ստացած , քննուելով ստուգուին , և ժողովս նոյն թուականէն սկսեալ ցուցակ մի պատրաստելով քահանայից ցուցակին հետ բաղաւտեց զայն և դտնուած փոքր տարբերութիւնն լուծելէ զինի , մարուր հաշիւ պատրաստեց , որ է 19 կէտիկներու գետնի վարձքերէ քահանայից իրաւունքն է տարին 172 զուրուշ , Սարաիբոս Եպիսկոպոսի կտակէ 10 զուրուշ : ժողովս որոշեց նաև որ սոյն համագումար 182 զուրուշը ինչ հաշուով որ հաւաքուի՝ նոյն հաշուով վճարուի :

քահանայից ամեն տարի նոցա Մշտնջենաւոր անուանեալ միւս հասութիւն հետ, առանց նկատողութեան առնելու թէ այն զետնի վարձքերէն որքանը կրնայ հաւաքուիլ: Քահանայք զիտեցին որ սոյն 182 զուրուշը 1845էն մինչև ցարդ բարդեալ հաշուով պէտք է որ ստանան: Սակայն ժողովս յայտնեց նոցա թէ 1845էն զկնի յաճախ անկանոնութիւններ, վարչութեանց ընդմիջումներ և արձանագրութեանց զանցառութիւններ եղած լինելով հին հաշիւներու վրայ որոշ յայտնութիւնք չկան թէ յիշեալ զետնի վարձքերէն որքանը հաւաքուած են: Եւ ինչպէս Ս. Էջմիածնի հին հաշիւներն փակուելով նորն սկսաւ կանոնաւոր կերպով, նոյնպէս քահանայից սոյն հին հաշիւներն ևս փակուելով 1880 Մարտէն սկսեալ պէտք է վճարուիլ: Սոյն ձևն Արժ. քահանայից հաւանութեամբն սկսաւ գործադրուիլ:

Ազգայն ընդհարում. — 1880 Մարտ ամսոյ մէջ քահանայք և եկեղեցականներ կայանալով առաջարկեցին ազգ. թղթագրամ հաստատել 'ի դիւրութիւն շրջաբերութեան, քանզի ստակներու կրած յաճախ փոփոխութեանց պատճառաւ եկեղեցւոյ և զանձանակաց արդիւնք սաստիկ նուազած էին: Ժողովս իրաւացի գտնելով սոյն առաջարկն, Տնտեսական Խորհրդոյ միջոցաւ ազգ. թղթագրամներ հաստատեց ձ, 10, 20 և 40 փարանոց, ինչպէս և քաղաքիս միւս ազգերն ևս արդէն հաստատած էին: Սակայն երեք ամիս զկնի ստակներուն զիններն կարգադրուելով, Տեղական Առաջարկութեան հրամանաւ ամեն ազգաց թղթագրամք խափանեցան, և Տնտեսական Խորհուրդն յայտարարութիւն հանելով մէկ ամսոյ մէջ ժողովեց թղթագրամներն նոցա փոխարկն վճարելով:

Պատրիարքարանի մոտայն 1879էն սկսեալ տարեկան 600 զրշ.է 50 մէճիտի բարձրացուց և նոյնը տեղեկագրեց 'ի Պատրիարքարան:

Ազգայն ընդհարում հանգանակութիւն 'ի Պոլս. — Ժողովս սոյն հանգանակութիւնն Եզմիրու մէջ որչափ կարելի է արդիւնաւոր ընելու համար յատուկ Յանձնաժողով կարեց, որոյ աշխատութեամբ հաւաքեալ արդեանց զուամարն 730 արծաթ մէճիտ զրկուեցաւ առ Աեդր. Յանձնաժողովն յետոյ դարձունելով 500 լիւրայի նուիրատուներն:

Հանգանակութիւն 'ի նպաստ սովելոց Հայաստանի. — Սոյն հանգանակութիւնն երկու անգամ բացուեցաւ քաղաքիս մէջ ըստ Պատրիարքական կոնդակաց և ըստ յորդորական յաճախ զրուութեանց Աեդրոնական Յանձնաժողովոյ: Ժողովս առաջին հանգանակութիւնն արդիւնաւոր ընելու համար երեք Մասնաժողովներ ընտրեց, մին արանց, միւսն կանանց, և երրորդն օտարազգաց հետ խառն Մասնաժողով օտարազգի ողորմած անձանց զիմելու համար: Սոյն երեք Մասնաժողովոց հանգանակած արդեանց զուամարներն միջոց առ միջոց 'ի Պատրիարքարան կամ առ Աեդր. Յանձնաժողովն յուղարկեցան, որոց համազուամարն է 3,792 արծաթ մէճիտ:

Իսկ երկրորդ հանգանակութիւնն պատշաճ համարեց դարձեալ Մասնաժողովներու և քահանայից և արհեստապետաց ձեռօք կատարել տալով նոցա իւրաքանչիւրին բաւականաչափ նուիրատուներ, որք հետզհետէ հաւաքեալ արդիւնքն կը յանձնէին Տնտեսական Խորհրդոյն: Աերջայէս ժողովս սոյն երկրորդ հանգանակութեան ամբողջական արդիւնքն ևս որ է 737 արծաթ մէճիտ և 2,263 մէճիտի աւելցած նուիրատուներն միասին առ Աեդրոնական Յանձնաժողովն զրկուելով հաշուեփակ ըրաւ:

Հանգանակութիւն վան Բարձրագոյն Ս. Երրասուլէօ. — Պատրիարքական կոնդակին համեմատ ժողովս ջանադիր եղև սոյն կարևոր հանգանակութիւնն ևս, որչափ կարելի է, արդիւնաւորել, ուստի քահանայից ձեռօք քաղաքիս ժողովրդեան մէջ, և թեմերու մէջ թաղականաց և քահանայից յաճախ զրեւով մինչև ցարդ հաւաքուած արդիւնքն առհաշիւ յուղարկած է առ Աեդրոնական Յանձնաժողովն երկու անգամով միայն 372 արծաթ մէճիտ, և հետզհետէ հաւաքման գործը փութացնելու համար յաճախ զիրեր ուղղած է առ թաղականս և առ քահանայութեան:

Հանգանակութիւն վան շինութեան մարտն Տեղե-Ալաճի. — Ազրիանուպոլսոյ Գեր. Առաջնորդի զրով առաջար-

կուած սոյն հանգանակութիւնն ևս որչափ կարելի է կատարուեցաւ Արժ. Տէր Յակոբ Քեչիշեանց քահանայի և պաշտօնապէս զրկուած Աղաճան անուն անձին շրջադաշտութեամբն, և հաւաքեալ արդեանց զուամարն եղև Եզմիրէն 57 1/2 մէճիտ, Մարիսայէն 30 3/4 մէճիտ, Այտրնէն 20 մէճիտ և կէս լիւրա, որք յիշեալ Աղաճանի յանձնուելով վարչութեանս պաշտօնական զրով զրկուեցաւ առ Առաջնորդն Ազրիանուպոլսոյ, և զատ տեղեկագրեցաւ նաև 'ի Պատրիարքարան:

Հանգանակութիւն 'ի նպաստ նորհարութեան քեղաշարժէ քառեալ Մէլեօնի ուղթայն կառուածոց. — Սոյն հանգանակութիւնն ևս ժողովս փութաց 'ի գլուխ հանել ժապաւիտեալ տետրակ յանձնելով Մէլեօնի Արժ. Տէր Մկրտիչ քահանային և թաղական մի անգամի ձեռք, որով 97 մէճիտի զուամար մի հաւաքուելով յանձնուեցաւ 'ի նորոգութիւն ազգ. ֆեստեալ կալուածոց տեղոյն:

Օգոստոս Ս. Սրբեմնաւ Էկեղեցւոյ. Արդիւնք և նորհարութեան. — Կրօն. Ժողովոյ առաջարկութեան վրայ վարչութիւնս Տնտեսական Խորհրդոյ հետ միասին որոշեց եկեղեցւոյ ամբողջական օժման հանդէսն կատարել տալ, և առ այս խորհրդակցութեամբ Կրօնական Ժողովոյ նախ մի քանի կարևոր շինութիւններն ըրաւ, և Աշխարհամատրան կիրակի օրն ամբողջական օժուամ կատարուելով համազուամար արդիւնքն շուրջ 1,000 մէճիտ Տնտես. Խորհուրդն զանձեց, և անմիջապէս ձեռնարկեցաւ 'ի նորոգութիւն տաճարին, ինչպէս նշանակուած է նաև Տնտես. Խորհրդոյ Տեղեկագրին մէջ:

Կրօն և նոր. — Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի Սպարթալեան իմանալով թէ ազգ. արկղն անձուկ վիճակի մէջ կը գտնուի, բարեհաճեցաւ 500 օսմանեան լիւրա յանձնել ազգ. արկղին մէջ մշտնջենաւոր միասին համար, որոյ 8% յառաջ եկած տոկոս 40 լիւրային 14 1/2 լիւրայն Կ. Պոլսոյ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցին սահմանուած է զրկուիլ ամեն տարի, 5 1/2 լիւրայն Կ. Պոլսոյ Միացեալ Ընկերութեան, որչափ որ կանգուն կը մնայ: Մնացեալ 20 լիւրայն դարձեալ բարեգործական նպատակներու 'ի գործ պիտի դրուի ինչ կերպիւ որ յանձնարարէ բարերար Կտակոյն: Բուն կտակն արձանագրեալ է Ազգ. Կտակագրքի 56 երեսը:

Մեծապատիւ Յակոբ և Ստեփան Եղբարք Եսայեան իւրեանց ծախիւք և հսկողութեամբ բարեհաճեցան վայելուչ յօրինուածովք նորոգել Պուրնապատի եկեղեցւոյ ոչ միայն վերջին գետնաշարժէն աւերեալ կողմերը այլ նաև նոր Զանգակատուն մի կառուցանել իւրեանց բարեպաշտ առատաձեռնութեամբ:

Մեծապատիւ Մկրտիչ Էքիզլէր Աիլայէթիս Պեթաթի ժողովոյն անդամակցութեան պաշտօնին համար Առաջարկութեան զանձէն ընդունած 400 զրշ. ամսական (կանոնական զեղջման համեմատ 360 զրշ. հինգնոց ստակ) բարեհաճեցաւ ազգ. արկղին յատկացնել 1879 նոյեմբեր ամսէն սկսելով և յայտնելով իւր նպատակն որ պէտք է 'ի նպաստ ազգ. վարժարանաց 'ի գործ դրուի: Սակայն մի քանի ամսէ զկնի գաղթեցոց սոյն ուղէրն:

Մեծապատիւ Յովհաննէս Կարապետեան Հնդկաստանի Ակրա քաղաքայի 8,000 Ֆրանք յանձնեց ազգ. արկղին հինգ տարի մնալու պայմանաժամաւ, և 8% տոկոսն վեց ամսէ վեց ամիս իրեն կամ իւր հրամանին վճարել: Հինգ տարիէն զկնի յիշեալ զուամարն յետոյ պահանջելու կամ մարհակն նորոգելու իրաւունք ունի: Իսկ յիշեալ զուամարն ազգ. արկղին մէջ գտնուած միջոցին եթէ (Ատուած մի արասցէ) վախճան կենաց հասանէ նմա, յայնժամ իւր վերջին կամքն է որ նոյն զուամարն ազգ. արկղին սեպհականութիւն մնայ, և որոյ տոկոսն բարգուելով երբ 10,000 Ֆրանք լինի, նոյնին տոկոսով Առողջարանութեան դասառուութիւն հաստատուի Զմիւռնիոյ Մեր վարժարանին մէջ:

Տիկին Մարիամ Յովհաննէս Աղազարեան այրի և տնորդի, իր ունեցած ամբողջ կալուածներն, որք արձանագրեալ են Ազգ. Դիւանատան մէջ, այժմէն Ազգ. Հիւանդանոցին ոչ միայն կտակեց, այլ նաև պաշտօնապէս վաճառեց, ընդունելով մի ապահովագիր որով յիշեալ Տիկինն իրաւունք ունի մինչև ցլերջ կենացն նոյն կալուա-

ծոց մէջ բնակիլ կամ վարձքերն ստանալ, և էմլաքի, դետնի վարձուց, նորոգութեանց ծախքերն իրմէ վճարել: Եւ յետ մահուան նորա Հիւանդանոցի սեպհականուած նոյն կալուածոց վարձքերն ազգ. արկըն պիտի ընդունի:

Կ. Գ. Յովհաննէս Թադէւոսէանի. — Ազգ. Աւարչութիւնս Տնտեսական Խորհրդոյ հետ միասին 1873ին շինուած սոյն 100 լիւրանոց կտակի տրամադրութիւնքն նկատողութեան առնելով գտաւ որ բոլորովին անսպաստ է ազգային արկըն. վասնորոյ առաջարկեց նորա հեղինակին, որ կամ այն անսպաստ տրամադրութիւնքն ջնջէ, կամ 1/10 հի իջեցնէ տոկոսն, քանզի յառաջագոյն 10, յետոյ 8 կ'առնէր, և կամ յետս առնու իւր գումարն ու կտակը նանրացնէ: Գ. Յովհաննէս Թադէւոսեան նանրացոյց իւր կտակն, ստանալով իւր գումարն, որով Ազգ. Կտակա- քրքի մէջ ջնջուեցաւ նոյն կտակի արձանագրութիւնը:

Կ. Գ. Ստեփան Բաղդասար Բաղդասար. — Սոյն Ընկերութիւնն խնդրած լինելով որ Զմիւռնիոյ մէջ ճիւղ մի ունե- նայ, ժողովս առաջարկեց զայն քաղաքիս Պատ. Սիւնեաց Ընկերութեան, որոյ և հաւանութիւնն ստանալով տե- ղեկադրեց առ Միացեալ Ընկերութիւնն:

Կ. Գ. Ստեփան Բաղդասար Բաղդասար Բաղդասար. — Նոյնպէս և սոյն Ընկերութեան խնդրանք և ժողովոյս առա- ջարկութեամբ քաղաքիս Ազնուափոյլ Տիկնայց Հոգաբար Ընկերութիւնն յանձն առաւ ըստ կարի օժանդակել Ազ- զանուէր Հայուհեաց Ընկերութեան, որ և տեղեկագրեցաւ առ նոյն Ընկերութիւնն:

Զմիւռնիոյ պատաստար Ազգայնոց Հանրագիր. — Քաղաքիս պատուաւոր ազգայնոց կողմէ վաթսուհի չափ ստորա- գրութեամբք, և գարբին ու օսկերիչ արհեստաւորաց կնքով ստորագրեալ Փետր. 29 թուով հետեւեալ Հան- րագիրն եկած է. —

«Գերապատիւ Սրբազան Հայր»

«Այս օրերս անանուն տետր մը մեր ձեռքն անցնելով՝ ցաւօք սրտի տեսանք անոր մէջ Ազգ. Աւարչութեան, Գարոցներու և Ձեր Սրբազնութեան դէմ անհիմն ամբաստանութիւններ և անարդական ակնարկութիւններ, որոնց շարժառիթն ուրիշ բան չկրնար ըլլալ, այլ միայն անձնական կիրք, և Հասարակութեան մէջ երկպառակութեան որոմներ ցանկու գրգիռ մը: Թէև հաւաստի ենք որ ողջամիտ Հասարակութիւնը այսպիսի խռովայոյղ պարսաւա- տետրի մը արժէք չընծայեր. սակայն նկատելով որ թերևս Ձեր Սրբազնութեան աղնի սիրտն զգածուի և վշտա- նայ, պարտ համարեցինք այսու գրութեամբ յայտնել մեր ցաւն և միանգամայն խնդրել որ բնաւ կարեորութիւն մը չտաք այդ պարսաւատետրին, որ իր մէջ կը կրէ իր դատապարտութիւնն, այլ ըստ առաջնոյն շարունակէք Ձեր խաղաղասիրական և ազգօգուտ պաշտօնն, որ նպատակ ունեցած է մինչև ցարդ՝ ժողովրդեան մէջ Ձեր շնոր- հիւ հաստատուած խաղաղութիւնն ու միութիւնն անվզով պահել և ազգային գործոց տալ այն ուղղութիւնն, որու արդիւնքն քանի մը տարիէ ՚ի վեր կը վայելէ ժողովուրդը:

«Գերապատիւ Սրբազան Հայր, Ձեր արդարատէր և արթուն հովուութիւնն, Ձեր նախագահած Ազգ. Աւար- չութեան կանոնաւոր, անձանձիր և արդիւնաշատ գործունէութիւնն, ազգային հիմնարկութեանց վերաշինութիւնն ու ելումուտից կանոնաւոր մատակարարութիւնն արդէն բարձրաձայն կը խօսին ՚ի նպաստ Ձեր հայրախնամ առաջ- նորութեան և մեր ձայնին կարօս չեն:

Խորին յարգանք մամբ

Զմիւռնիա, 29 Փետրուար 1880

Նուպար Տիրացուեան  
Եղբարք Աւագեան  
Եղբարք Էլմասեան  
Պօղոս Կաստանդեան

Խաչատուր Մարգար Եքիզլէր  
Մկրտիչ Թէքզըլըբեան  
Խաչատուր Աւագեան  
Յարութիւն Կոստանդեան

Ձեր Սրբազնութեան  
Խոնարհ որդիք

Յակոբ Սպարթալեան  
Կ. Մ. Պալեօղեան  
Տ. Թագթաղեան  
Յովհաննէս Տիլպէրեան

Գ. Յ. Բաբաղեան  
Ստեփան Յ. Տէտէեան  
Գ. Մ. Ալփիարեան  
Աբրահամ Կարապետեան  
Յովհաննէս Նուպարեան  
Յովհաննէս Ս. Չաքրեան  
Կարապետ Սէրճիօեան  
Ստեփան Իբրէքճեան  
Ստեփան Փանոսեան  
Գէորդ Կ. Ակասեան  
Գարբիէլ Սիվրիսարլեան  
Մկրտիչ Եսայեան  
Ստեփան Ճէլէպեան  
Գարբիէլ Ճշմարտախօսեան  
Թազուր Սըվաղեան  
Կարապետ Յ. Չաքրեան

Խաչատուր Գարաղաշեան  
Ռուբէն Աղազարեան  
Մկրտիչ Էքիզլէր  
Աբրահամ Գ. Պէրկամալեան  
Պ. Թ. Պէրկամալեան  
Կ. Արապեան  
Աւետիս Պօյաճեան  
Գալուստ Խումարեան  
Յովհաննէս Աւետիսեան  
Պ. Խ. Աւագեան  
Հայկ Խ. Աղազարեան  
Յակոբ Գարաղաշեան  
Ի դիմաց դարբին արհեստա-  
ւորաց Ստեփան Աւետիսեան  
(Կնէ+)

Յակոբ Եսայեան  
Եղբարք Պաքրճեան  
Զարէճ Տիլպէրեան  
Պօղոս Աւարպետեան  
Պօղոս Յ. Տիլպէրեան  
Ստեփան Աղաճանեան  
Կարապետ Մ. Յակոբեան  
Ոսկան Վ. Կ. Ոսկանեան  
Ճանիկ Էլմասեան  
Ստեփան Ա. Աղազարեան  
Գէորդ Սուրբանեան  
Մ. Մամուրեան  
Ի դիմաց ոսկերիչ արհես-  
տաւորաց Գասպար Մինասեան  
(Կնէ+)

Առ Գերապատիւ Տ. Մեկքիսեղեկ Մուրատեանց  
Բարեխնամ Առաջնորդ Զմիւռնիոյ և Նախագահ  
Ազգային Ժողովոյ  
՚ի Քաղաքիս:

3. ՏԵՂԱԿԱՆ

Ժողովրդեան գործերն բազմօք զբաղեցուցած են ժողովոյս նիստերն, սակայն նոցա մանրամասն պատմութիւնքն կարեւոր չլինելով համառօտիւ կ'անուանեմք:

- Թաւառագիւտ Գործեր, որք ժողովոյս միջոցաւ աւարտած կամ քննուած են:
- Հանգուցեալ Գարբին Թազուրի՝ ընդ նմին և նորա հանգուցեալ զուտար Չափինայի ժառանգական գոյից բաժա- նագիրն աւարտեալ և վաւերացեալ է:
- Պարծանքեան հանգուցեալ Պօղոսի ժառանգական գոյից հաշուէքնութիւնն տեսնուած:
- Սէմիգեան Մարիամի հայրենական ժառանգութեան համար դիրքեր ուղղուած են առ ժառանգակիցս:
- Միւրիւճի Գալուստի գոյից բաժանագիրն աւարտեալ և վաւերացեալ:
- Օհան Մսերեանի ժառանգական բաժանագիրն աւարտեալ և վաւերացեալ:
- Գէորդ Աւագեանի հանգուցեալ կնոջ գոյից բաժանագիրն միայն վաւերացեալ:
- Հալաճ Պէտիկեան Մարթայի գոյից նախորդ Աւարչութենէ պատրաստուած բաժանագրի վերաքննութիւնն և գործադրութիւնն աւարտեալ:
- Հանգուցեալ Բարսեղ Գր. Բարսեղեանի գոյից քննութիւնն աւարտեալ և բաժանագիրն վաւերացեալ:
- Հանգուցեալ Ղ. Պալազարեանի ժառանգական գոյից մասին ժառանգորդաց մէջ հաստատեալ և կեդրոնական վարչութենէ և Բ. Դուռէ վաւերացեալ անգորրագրութիւնն, արձանագրեալ և վաւերացեալ:
- Արաբկիրցի Մարտիրոս անուն ազգայինն առկէ շուրջ տասն տարի առաջ Ազգ. Հիւանդանոցին մէջ վախճանած



և դոյքն 1380 դուրուշ լերա 118էն ժամանակին Վարչութեան ձեռք ազդ. արկն աւանդ դրուած և Գիւանաւ տան տոււարներուն մէջ արձանագրուած լինելով, յիշեալին աւանդ գումարն այս անգամ Արաբկիրի Թաղական Խորհրդոյ գրով ժառանգորդաց կողմէ պաշտօնապէս ղրկուած փոխանորդ Պ. Պօղոս Յակոբեանին յանձնեցաւ :

- Վարչութեան օրակարգին մէջ են հետեւեալներն .
- Էօտէմիշէն եկող Հռիփսիմէ Ս. Միրաքեանի և որբոց Էօտէմիշի Իլ. սնտուկին մէջ ունեցած ժառանգական գումարին խնդիրն :
- Մարտիկեան հանգուցեալ Գրիգորի ժառանգական գոյից քննութեան և բաժանման խնդիրն :
- Ծարուկեան քերց խնդիրն :

Թողովս զբաղած է նաև Գատաստանական Խորհրդոյ կողմէ ղրկուած բաւական կնճառի գործերով, որոց մէջ նշանակութեան արժանի են .

Մարիամ Մուրատեանի ամուսնական խնդիրն, որ նախորդ Վարչութեանց ժամանակէ մնացած էր, և որոյ մասին Պատրիարքարանի հետ Վարչութիւնս բաւական բանակցելէ և արդիւնք մի չտեսնելէ ղինի Մարիամ Մուրատեան Համուս գնացած է անդ իւր դատն վարելու ամուսնոյն հետ :

Մարգար Էփիզլէր Պ. Խաչատուրի և Սուքիասեան Պ. Սարգսի մէջ եղած տան մի խնդիրն թողովս նախորդ Վարչութեան արձանագրութիւններն քննելով, և ըստ խնդրոյ Պ. Ս. Սուքիասեանի նախորդ Վարչութեան անգամոց վկայութիւններն և յետոյ նոյն իսկ Պ. Խաչատուր Մարգար Էփիզլէրի՝ Ս. Նախագահի և քահանայից դատուն միջոցաւ բանակցութիւնն ևս ուշադրութեան առնելով որոշեց յիշեալ տան ինթիքալն գործադրել երբ որ Պ. Խաչատուր Մարգար Էփիզլէր առաջարկէ :

4. ԹԵՄԱԿԱՆ

Թեմական գործողութիւնք իրենց ներկայացուցած բազմատեսակ դժուարութեանց հակառակ չունին յառաջդիմական նշանաւոր քայլեր . և այս ՚ի պատճառս նոյա նուազաթիւ, աղքատիկ և ընդհանրապէս անուս ժողովուրդ լինելուն : Արդէն այս ողորմելի կացութեան պատճառաւ Թեմական ժողովուրդք բաց ՚ի մի քանիներէ, քահանայ և վարժապետ պահելու անկարող էին : Եկեղեցեաց հինօրեայ հաշիւներ, անոր ասոր քով անցած գումարներ, մուր հակառոր և անմուրհակ պարտքեր բոլորովին հաշմած էին Թեմական ազդ. արկներու կացութիւնն : Գեր. Ս. Առաջնորդն իւր այցելութեան միջոցին մի քանի թեմերու մէջ այդ կնճառի հաշիւներն մաքրած, և իւրաքանչիւր պարտականի ստորագրութեամբ մուրհակի վերածած է Եկեղեցեաց պահանջներն ամեն ամիս մաս առ մաս վճարելու պայմանաւ, մինչև որ հաշիւներն ամբողջապէս վճարուին :

Սակայն Գեր. Ս. Առաջնորդն տեսնելով որ Թեմական եկեղեցեաց հասոյթք և եկամուտք անբաւական են զըպրոցաց ծախքերն հոգալու, և այս պատճառաւ Թաղականաց մէջ բաժանում և ժողովրդեան մէջ երկպառակութիւն, յուզմունք և կոխիք անպակաս կը լինին, շատ անգամ զպրօցներն փակ կը մնան և խեղճ մանկունք փողօցներ կը թափառին : Այս ամեն չարեաց առաջին առնելու համար մի քանի թեմերու մէջ ազդ. տուրք հաստատեց իւրաքանչիւր ազգայնոց իւր հաճութեամբ ստորագրել տալով իւր կարողութեան չափով տալու տուրքն : Տարակոյս չկայ որ սոյն կարգադրութեանց կանոնաւոր կերպիւ գործադրութիւնէ կախեալ են Թեմական զպրօցներու յառաջդիմութիւնն և յարատեւութիւնն :

Թողովս տեսնելով որ թեմերու ազդ. արկիլ եկամտից հաւաքմանց մէջ անկարողութիւնք կը լինին, Արջաբերական հրահանգ ղրկեց ամեն թեմերու որ ազդ. կալուածներու ապառիկ հաշիւներն հաւաքելու փոյթ տանին, և

քնաւ ապառիկ հաշուով վարձու չտան, այլ որ և է վարձակալ պարտի կանխիկ վճարելով ազգ. կալուածի մը վարձքը կարող լինի վարձել զայն :

Թեմական եկեղեցեաց հինօրեայ հաշիւներու քննութեան կարգին մէջ կարևորութիւն ունի Պուրնապատի եկեղեցւոյ հաշուէքննութիւնն, որ նախորդ Վարչութիւններէ անցած և թողովոյս օրակարգին մէջ մտած էր : 1862 թուականին սկսուած սոյն եկեղեցւոյ հաշիւն, զկնի բազում տարաձայնութեանց առիթ լինելոյ, վերջապէս թողովս շատ անգամ արտաքոյ կարգի նիստեր գումարելով, նախորդ Վարչութեանց արձանագրութիւններն, եկեղեցւոյ տոււարներն խորին ուշադրութեամբ հետազոտելէ ղինի հաշուեկշիւ մի հանեց, որով լուծուեցաւ սոյն հին և կնճառ խնդիրն : Հաշուեցոյցի պատճէնն ևս ղրկեց եկեղեցւոյն շինութեան ժամանակ դանուող հողաբարձութեան : Յիշեալ հաշուեցոյցի մի համառօտագիծ սլատիկերն արժան կը համարինք ներկայացնել աստ :

Թ Ա Մ Բ

Եկեղեցւոյ շինութեան սակարկեալ ծախք 1,000 լուիճ . . . . .	դրշ .	124,000
Կանանց վերնատան շինութեան ծախք . . . . .	»	20,000
Պատերու շինութեան և կից գետնի մը գնուելու ծախք . . . . .	»	10,000
	Գումար	154,000

Ա Ր Գ Ի Ի Ն Բ

Հանդանակութեան արդիւնք 118 անձերէ . . . . .	դրշ .	109,278 25
Կարապետ Էփիզեանի նուէր 50 լերա . . . . .	»	7,300
Ս. Ստեփաննոս եկեղեցիէ նպաստ . . . . .	»	4,000
Պուրնապատի հին եկեղեցւոյ արդիւնք . . . . .	»	4,220
Օծման օրը եղած հաւանական արդիւնք . . . . .	»	29,201 75
	Գումար	154,000

Թողովս աշխատելով մաքրեց նաև Մէնէմէնի Ս. Սարգիս եկեղեցւոյ հինօրեայ հաշիւներն, և հաշուեցուցան ղրկեց ՚ի Մէնէմէն, յորմէ ղինի նորոգ տոււարաւ կանոնաւոր հաշուեկալութիւն բռնուիլ սկսուած է :

Պերկամայի եկեղեցւոյ Իզմիրի մէջ ունեցած մթերանոցին եկամտն, ըստ զօրութեան կտակին, Պերկամայի քահանային և վարժապետի ամսականաց յատկացեալ լինելով, և տեսնելով թողովս որ ըստ խնդրոյ Թաղական Խորհրդոյն մաս առ մաս գումարներ ղրկուելով բուն նպատակին չծառայեր, և քահանայն ու վարժապետն կը գանգատին, որոշեց այսուհետև յիշեալ եկամտն աստ հաւաքել և քահանային ու վարժապետի ամսականքն ասկէ վճարել, և սոյն որոշումը հաղորդեց սեղւոյն Թաղական Խորհուրդին :

Կան ևս ուրիշ Թեմական մանր այլ երկարապատում գործողութիւնք, սակայն թողովս մի առ մի իւր Ատենադրութեանց մէջ արձանագրած լինելով հարկ չտեսներ աստ մանրամասն տեղեկագրել :

5. ԳՐԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԲ

Ազգ. Վարչութիւնս միշտ լաւ պահած է իւր յարաբերութիւնքն ընդ Տեղական Կառավարութեան : Չանազան առիթներու մէջ թաղրի տուած է Բարձր. Կուսակալաց, և իւր թաղրիներն յարգուած և մեծ մասամբ գործադրուած են ըստ կարելոյն :

Ջինս-բաշմախ — Տէրութեան գանձուն վճարելի սոյն սուրբի վիճակն ևս որչափ կարելի է կանոնաւորելու համար ժողովս իւր պաշտօնավարութեան սկիզբէն յատուկ ուշադրութիւն դարձուցած և հոգ տարած է : Սակայն մի կողմէ սոյն տրոց հին և կնճռոտած հաշիւներու քննութիւնն, ինչպէս են բաշխման սոււմարին զրեթէ տասնամեայ հնութեան պատճառաւ շատերուն վախճանմունքն, և նորահաս երիտասարդաց անուանքն սոււմարին մէջ դեռ մուտ գտած չլինելուն, միւս կողմէ Կառավարութեան կողմէ եկած ստիպողական հրամանադիրներն Կառավարութեան գանձուն ստակ յանձնելու համար, հարկադրեցին զժողովս շատ զիշերներ նիստ ընել, մինչև կէս զիշերներ զբաղել, վերջապէս յաջողեցաւ ժողովս ունենալ այժմ Գիւանատան մէջ որչափ կարելի է կանոնաւոր սոււմար, որ իւրաքանչիւր ազգայնոց պարտքերն ո՞ր տարիէն սկսեալ մինչև ո՞ր տարին, և ո՞ր տարին թղթադրամով, ո՞րը հինգնոցը 100 փարայէն, և ո՞րը մէճիտ ստակ վճարելիքը կը ցուցնէ : Վարչութիւնս սոյն կանոնաւորեալ սոււմարին շնորհիւ զիւրութիւն ունեցաւ և Բարձր. Կուսակալի ստիպողական հրամանադրերու համեմատ յաճախ յայտարարութիւններ տպելով ծանուցանել բոլոր ազգայնոց թղթադրամով պարտք վճարելու պայմանաժամերն համողիչ կերպիւ յորդոր կարգալով որ իւրաքանչիւր ոք փութայ որոշեալ պայմանաժամերուն իւր պարտքը վճարել յօգուտ իւր : Այս պատճառաւ և հաւաքիչներ իսկ հանեց որպէս զի Զինուորական տրոց հաւաքմունք փութով կատարուին : Բայց և այնպէս Վարչութիւնս բարեբաստիկ չէ ըսելու թէ և ժողովուրդն իւր ջանից համապատասխան գանուեցաւ, քանզի դեռ ևս կան շատեր որոց պարտքն անվճար կը մնան :

Ահաւասիկ, Տեառք Երեսփոխանք, Ազգ. Բարձրական ժողովս իւր երկամեայ պաշտօնավարութեան շրջանն կնքելով իւր համարատուութիւնն ևս կը կատարէ, և իւր հրաժարականն ներկայիս մատուցանելով կը մնայ միշտ Ազգին օգտին ջերմ բարեմաղթով :

**Ա.ԶԳ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Ընդ Նախագահութեամբ Գեր. Առաջնորդ Ս. Հօր  
 Արեւուպետ ԿԱՐԱՊԵՏ Ա. ՍՊԱՐՔԱԼԵԱՆ  
 Արեւուպետ ՍՏԵՓԱՆ ԹԷՍԵՒԻԷՃԵԱՆ  
 ՍՏԵՓԱՆ ՎԱՐՊԵՏԵԱՆ  
 ԿԱՐԱՊԵՏ ՇԱՀԻՆԵԱՆ

Զմիւռնիա, 18 օգոստոս 1881 :

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ք Ի Ր**

**ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ԿՐՕՆԵԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ**

Ա.Ո.

**ԳԱԻԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ**

**ՉՄԻՒՌՆԵՌՈՅ**

Նախորդ Կրօնական ժողովն իւր ութամեայ գործողութեանց տեղեկագիրն (1878 Յունուար 13էն մինչև Օգոստոս) արդէն մատուցած է Պատկառելի Երեսփոխանութեանդ, որ և սուպրուած է 1878 թուականին : Իսկ այնուհետև մինչև 1880 Օգոստոս 2 իւր շրջանը լրացնելով հրաժարած է առանց Տեղեկագիր մատուցանելու, ուստի ներկայ Կրօնական ժողովս, որ ընտրուած է 1880 Օգոստոս 2ին, կը պարտաւորի ոչ միայն իւր ժամանակին, այլ և իւր նախորդին մնացեալ Տեղեկագիրն 'ի միասին մատուցանել Պատկ. Երեսփոխանութեանդ, Կրօնական ժողովոյ ընդհանուր գործողութեանց կանոնադրութիւնը և անընդհատ շարունակութիւնը պահպանելու նպատակաւ : Եւ առ այս հարկ կը համարի պատշաճութեան և զիւրաւ հասկանալի լինելուն համար հետեւեալ կարգը բռնել, այն է՝

- Ա. Ներքին կամ Տեղական գործողութիւնք .
- Բ. Թեմական գործողութիւնք .
- Գ. Արտաքին յարաբերութիւնք .
- Դ. Թղթակցութիւնք :

**Ա. ՆԵՐՔԻՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԷ**

- Ա. Կրօնական ժողովս զբաղած է մի քանի ամուսնական խնդիրներով, ինչպէս են
- Տիկին Մարիամ Մուրատեանի՝ ընդ Յոյն Գարբոյի :
- Գ. Սենեքերիմի՝ ընդ կնոջ իւրոյ Աննայի :

Խաչիկ պէյի՛ ընդ կնոջ իւրոյ Սրբուհւոյն (որոյ մասին և թղթակցութիւններ ունեցած է ընդ Հիւպատոսարանին Ռուսիոյ) և այլն :

Բ. Ս. Լուսաւորիչ և Ս. Ստեփաննոս եկեղեցեաց օժման հանդէսներն կատարած է , առաջնոյն նորոգութեան՝ և երկրորդին յերեսուն ամաց հետէ առանց ամբողջական օժման մնալուն առթիւ , որոց մանրամասն պարագաներն նկարագրուած են ժողովոյս Ատենադրութեանց մէջ :

Գ. Որոշած է Կրօնական ժողովոյ կնքով վաւերացեալ ծննդեան և մկրտութեան կամ ամուսնական վկայադրաց համար մի արծաթ մէճիտ պահանջել յօրուտ Աղզ. արկղին :

Դ. Տնօրինած է Խաչվերայի տօնն. հանդիսիւ և թափօրիւ կատարել նաև 'ի Ջմիւռին , որ Ս. Առաջնորդաց նոյն օրն Մաշնիսայի Ս. Խաչ եկեղեցւոյն մեծահանդէս տօնախմբութեան առթիւ բացակայ լինելուն համար , զաղբած էր մի քանի տարիներէ 'ի վեր :

Ե. Վահանայից դասն ընդհանուր ժողով դումարելով կարգադրած է այն ամեն կարևոր տնօրէնութիւններն , որով կարելի է առաջն առնուլ ապօրինի ամուսնութեանց , որք դժբաղդարար օրինազանց անձանց և օտար կղերի թեւադրութեամբ երբեմն կը պատահին 'ի ցաւ սրտի համօրէն Աղզիս :

Զ. Խորին ուշադրութեան առնուլ Նաղիլլիի եկեղեցւոյն տէր Մկրտիչ քահանայի և Սէօքէի եկեղեցւոյն տէր Յովհաննէս քահանայի խնդիրներն , որք իրենց վիճակէն դժոյհելով քաղաքս եկած էին , տնօրինած է ըստ արժանոյն : Նոյնպէս Մաշնիսայի Ս. Սիօն եկեղեցւոյ տէր Յովհաննէս քահանայի կատարեալ զղջման առթիւ ներշնչութեան առթիւ :

Է. Ըստ առաջարկութեան Աղշէհիւրի և Աւերին Մաշնիսայի հանուր ազգայնոց , յետ վեցամեայ պատրաստութեան , քահանայական ձեռնադրութեան արժանացուցած է՝ տիրացու Գէորգն և տիրացու Բարսեղն Աղշէհիւրի համար , և տիրացու Նիրահունն Աւերին Մաշնիսայի համար : Իսկ Յակոբ Գէորգեանն , որ քաղաքիս Մեծարոյ ազգայնոց ումանց կողմէ առաջարկուած էր քահանայութեան համար , յետ մանրամասն քննութեան՝ յատենի Կրօնական ժողովոյս , մերժած է իւր անհմտութեան և անընդունակութեան համար :

**Բ. ԹԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ**

Կրօնական ժողովս թեմական եկեղեցեաց բարեկարգութեան համար քանի մը քահանայից փոփոխութիւններ ըրած է , ինչպէս և զանազան հրահանգներ զրկած է ամուսնական խնդրոց և օտարաց հետ ունեցած յարաբերութեանց համար :

Ասոր հետ 'ի միասին որոշած է բնաւ չխառնուիլ Էօտէմիշի ազգային կրօնական գործոց , քանի որ տեղւոյն բնակիչներն իրենց տէր Սիմէօն քահանայն արբեցնելով ապօրինի ամուսնութիւն մի կատարել տուած են , որ կանխաւ արգիլուած էր Կրօնական ժողովէս , և որոյ մասին երբ որոշուեցաւ յիշեալ քահանայն կոչել և պատժել , տեղւոյն ժողովուրդն սկսաւ հանրադրութեամբ պաշտպանել զարբչիւ քահանայն , և Կրօնական ժողովոյս կողմանէ իրենց զրկուած տէր Գրիգոր քահանայն յետս դարձնել անարգանօք , յայտնելով թէ խմբովին կրօնափոխութեան պիտի դիմեն՝ եթէ տէր Սիմէօն քահանայն հանտի կամ պատժուի : Էօտէմիշի ազգայիւք մի քանի խնդրակոչ կարգադրիչներու շնորհիւ զեռ ևս կը յարատեւեն սոյն յամառութեան մէջ , և թէև քանիցս խնդրամատոց եղած են որ ներուի քահանային , բայց անընդունելի եղած է Կրօնական ժողովոյս կողմէ իրենց ապօրինի խնդիրն :

**Գ. ԱՐՏԱԲԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ**

Ժողովոյս արտաքին յարաբերութիւններն եղած են զլիսաւորապէս Աղզ. Պատրիարքարանի , մի քանի Առաջնորդութեանց , և տեղւոյս ու Մաշնիսայի Յոյն Առաջնորդաց հետ , և մեծաւ մասամբ նիւթ եղած են իւր գործառնութեանց՝ ամուսնական և կտակադրութեան խնդիրներ : Սոյն յարաբերական գործողութեանց մէջ թէև հետաքրքրական զէպքեր շատ կան , և թէև ժողովս ուրախ է որ երբեք իւր իրաւունքն զոչած չէ , բայց ընդարձակօրէն նկարագրել այս տեղ հարկ չհամարիր :

**Դ. ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ**

Ժողովս պարտք կը համարի յայտնել նաև որ իւր գործոց բարւոք տնօրէնութեան համար ունեցած է թէ ներքին և թէ՛ արտաքին կարևոր թղթակցութիւններ , որոց թիւն կը հասնի 164 : Եւ որոնք ամբողջապէս կը զբաղուին ժողովոյս նամակադրութեան պատճնից տումարին մէջ :

Արդ՝ ժողովս իւր գործառնութեանց սոյն համառօտադիժ Տեղեկացիրն մատուցանելով Պատկ. Երեսփոխանութեանց , պարտք կը համարի յայտարարել թէ օգնութեամբն Աստուծոյ և աջակցութեամբ սիրելի Աղզայնոց կատարած է իւր նուիրական պարտաւորութիւնն , միշտ պատկառ կալով իւր կոչմանն և ազգային պատուոյն , որ յոյժ թանկադին են իրեն համար :

**ԱԶԳ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Ընդ Նախադատութեամբ Գեր. Առաջնորդ Ս. Հօր

Ջմիւռնիա , 20 Օդոստոս 1881

- Արեւապետ. ՏԻՐ ԳԵՈՐԳ ԲԱՀԱՆԱՅ ԳԱՌՆԻԿ
- Արեւադարձ. ՏԻՐ ՅՈՎՀ. ԲԱՀԱՆԱՅ ՄԻՆԱՍԵԱՆ
- ՏԻՐ ԿԱՐԱԳԵՏ ԲԱՀԱՆԱՅ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ
- ՏԻՐ ՅԱԿՈՒԲ ԲԱՀԱՆԱՅ Մ. ՔԷՀԻՇԵԱՆՅ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

## ՏՆՏԵՍ ԽՈՐՀՐԴՈՅ ԸՌ Ե.Չ.Գ. Վ.ԸՐՉՈՒԹԻՒՆ

Մեծապատիւ Անդամք Ազգ. Քաղաքական Ժողովոյ,

Տնտեսական Խորհուրդս երկամայ երկու շրջան աւարտած լինելով, այս անգամ կը փութայ իւր հրաժարականին հետ մէկտեղ իւր գործողութեանց Տեղեկագիրը մատուցանել:

Խորհուրդս իւր պաշտօնավարութեան առաջին տարին լրացնելէ յետոյ, միամայ Հաշուեցուցակն և Տեղեկագիրն ուղղեց Պատ. Ժողովոյդ, ինչորեւից որ եթէ յարմար դատեք հրատարակութեան յանձնէք ՚ի տեղեկութիւն բուրր ազգայնոց: Սիրով կատարեցիք մեր առաջարկութիւնը:

Այնուհետև Խորհուրդս երեք տարուան գործողութեանց Հաշուեցուցակներն ալ հետզհետէ ամեն տարի Չեղ Գերկայացնելու պատիւն ունեցանք, բայց հրատարակութեան տրուած չըլլալով այս անգամ Խորհուրդս յարմարագոյն դատեց երեք տարուան գործողութիւններն ամփոփելով՝ Հաշուեցուցակը ներկայացնել սոյն Տեղեկագրով: Այլ յուսամք հրատարակել տալով բոլոր ազգայնոց ալ կը հաղորդէք:

Թիւ 1 ցուցակն երկամայ բոլոր գործողութեանց Հաշուեկշիւն է, Խորհուրդս հսկողութեան տակ բռնուած ազգային տուեմաներէ քաղելով: Իսկ ազգային տնտեսական կացութիւնը ինչ վիճակի մէջ գտած և այժմ ինչ վիճակի մէջ թողած ըլլալնու նկատմամբ քանի մը բացատրութիւններ տալ կարևոր կը սեպենք:

Ա. Պաշտօնավարութեան սկսած ժամանակինս ազգ. ընդհանուր պարտքը մէջիտ 20էն 625,665 դահեկան\* էր, իսկ հիմայ թիւ 1 Հաշուեկշիւն մէջ 760,684 1/2 դահեկան պարտք կ'երևի, այսինքն 135,020 1/2 դահեկան աւելցած: Բայց այս աւելցած պարտքի դումարէն 43,000 դահեկան՝ պարտատ գրամ, 28,000 դահեկան՝ ողջ ժողովելիք, և 4881-82 բանելիք շրջանին համար կանխիկ էմլաքի վճարուած առհաշիւ 4,000 դահեկան, ընդամենը 75,000 դահեկանի դումարն զեղչելով ազգ. ընդհանուր պարտքն միայն 60,000 դահեկան կամ 3,000 արծ. մէջիտ աւելցած է:

Այս աւելցած պարտքն զոյացած է հետևեալ շինութիւններու առթիւ.

* 1878ին հրատարակուած Հաշուեցուցիչ համեմատ ազգային պարտք . . . . .	547475	(Լէրս 105էն)
Ազգապատկերաց Ընկերութեան հաշուին կարգադրեալ գումարն . . . . .	68250	» »
Այժմ Լէրս 107է ըլլալուն արբերութեան . . . . .	9939	
	<b>625664</b>	

† Ազգային արկղը փոխառութեան ընկերութեան պէտք չունէր, բայց ասի մը յատուկ Հնդկական Պ. Յոֆմանի և Կարապետեանի Իրիկ ազգ. արկղի նպատակաւ պայմաններով 400 քաղ. ոսկոյ փոխառութեան մը, և 100 ռումն. ոսկի ալ երկու արբերութեան ընդհանրել առաջարկուած ըլլալուն, Խորհուրդս սոյն փոխառութեաններն ստիպուեցան չեղելու:

Բէշարմալճըլար պաշի սրճարան	Ծախք	Մէջիտ	750	Եկամուտ	Մէջիտ	265
Մումախի խան	»	»	2400	»	»	470
Չընկըրլարայի մէջ երկու մթերանոց	»	»	550	»	»	150
Ֆրէնքխանէի ծովակողմը ճաշարան	»	»	1200	»	»	375
Ընդարձակում դեղարանի Շահին խանի կից	»	»	265	»	»	55
Ծախու առնուած երկու տնակ մէկ դետին	»	»	300	»	»	65
			<b>5465</b>			<b>1380</b>

Ուստի ազգ. արկղը թէև 3,000 մէջիտ աւելցած պարտքին համար 8% տարին 240 արծ. մէջիտ աւելի ստուկոս վճարելու ենթարկուած է, բայց փոխարէն 1,380 մէջիտ հասոյթ կ'ընդունի:

Բ. Ազգ. կալուածներէ 1877ին Ազգը կ'ընդունէր հասոյթ 375,000 դահեկան, անցուկ ստակ, բայց չորս տարիէ ՚ի վեր հետզհետէ եղած նոր շինութեանց առթիւ կալուածներու եկամուտն հասած է 420,000 դահեկանի. իսկ թիւ 1 Հաշուեկշիւն մէջ որչափ որ երեք տարուան մէջ 1,051,000 դահեկան, ընդունուած կ'երևի, բայց աւելցուցնելու է ասոր վրայ ժողովելի 46,000, Յարութիւն աղա Կոստանդեանի յանձնուած կալուածներու երեք տարուան վարձքն 63,000, Թէլէկրաֆհանէի և Քաղնօի մէկ մէկ տարի և Շահին խանի կից քանի մը խանութներու պարտք մնացած վարձերու տարբերութիւնն:

Գ. Գաւառական Ժողովոյ որոշմամբ Խորհուրդս հաշիւները սուսու ու ծախեց այրած ու անորոշածներն մաս մը եկեղեցական արծաթեղէններ, նաև Ղարշի-Եախան հասոյթ չեքող դետին մը. այս դումարներու մեծ մասով շինեց նոր Գերեզմանատան պատերն, իսկ մնացած դումարն թիւ 2 Պարտուց ցուցակին մէջ դարձեալ իբր աւանդ պարտք նշանակուած է:

Դ. Կալուածաց նորոգութեանց համար երեք տարուան մէջ 165,000 դահեկան ծախք եղած է, որոնց մի առ մի հաշիւը կը տեսնուի ՚ի ցուցակն թիւ 3: Այս վերջին տարուան մէջ մանաւանդ պատահած երկրաշարժն արտաքոյ կարգի նորոգութիւններու դուռ բացած ըլլալով մեծ դումար ծախք ընելու ստիպողականութիւն բերած էր. բայց հիմայ կրնամք ըսել թէ ազգ. կալուածները մեծ մասամբ խիստ զոհացուցիչ վիճակի մէջ են և այսուհետև խիստ մեծ ծախքերու հարկ չպիտի ըլլայ:

Ե. Պատահական ծախքերու 95,000 դահեկան դումարին վրայօք ալ քանի մը բացատրութիւններ հարկ են. այս դումարին մէջն են Միսքեան հանդուցելոյն թողած մթերանոցներու վերաբերեալ Պօլիս տեղի ունեցած այլ և այլ դատական ծախքերու մէկ մասն, Չայրըլը-պահալի համար սկսուած և առկախ մնացած դատին, նաև Տիւկին Յովհաննէս մէջի. Ստեփան Աղազարեանի կալուածաց համար և ուրիշ դատերու ծախքերն, քանի մը վարձու պայմանագրերու վաւերացման, բոսթայի, գիւանական բոլոր պիտոյից, հրատարակութեանց, Գուռն երթնեկելու համար Առաջնորդ Ս. Հօր կառքի վարձերն և և, որոնց մի առ մի ցուցակն ներկայացնել դժուար ըլլալուն, տեղեկանալ փափաքող ազգային կրնան ազգ. տոււմարներու մէջ տեսնել:

Զ. Խորհուրդս՝ էմլաքի հետ ազգ. կալուածներու տրոց հաշիւներն և գնահատութիւնները վերջնական կերպիւ կարգադրելու բարեբաղդութիւնն նաև ունեցաւ իւր պաշտօնավարութեան շրջանին մէջ:

Է. Պարտուց տոկոս 195,000 դահեկան վճարուած է, այլ բարդելու է այս դումարին վրայ նաև 63,000 դահեկան. Յարութիւն Կոստանդեանի քով գրաւ գրուած տան և մթերանոցներու երեք տարուան վարձագրին. գումար՝ զոր կալուածաց վարձերու գումարին վրայ ալ աւելցուցած ենք, ճիշդ տեղեկութիւն ստուած ըլլալու համար:

Յարմար կը սեպենք նաև տեղեկագրել թէ, որչափ որ Խորհուրդս յաջողած է ազգ. բոլոր պարտուց տոկոսներն 8% իջեցնել, բայց միւսի քահանայից Մշտնջենաւոր գումարին համար ազգ. արկղը 10 տոկոս կը վճարէ:

Ը. Գիւանական ծախքերն են Առաջնորդ Ս. Հօր և Պաշտօնէից վճարեալ ամսականներն միայն, որոնց ամսական ցուցակն է հետևեալը.

Ս. Առաջնորդ Հօր . . . . .	1650	(Մէճիտը 33էն)
Պ. Ս. Պալապանեանի . . . . .	600	(այժմ 40 մէճիտ կամ 1320)
Պ. Օհանի . . . . .	660	
Քէհեա Յակոբի . . . . .	600	
Հաւարիչ Մկրտչի . . . . .	462	(այժմ պաշտօնէ դադարեալ)
Քավազ Մկրտչի . . . . .	350	
	<hr/>	
	4332	

Թ. Երկսեռ վարժարանաց համար ամեն տարի Գաւառական Պատկ. Ժողովն յատուկ դումար մը յատկացնելէ զատ, կարող աշակերտներէ հաւաքելի թոշակի դումարն ալ դպրոցաց համար ծախք ընելու որոշում կ'ընէր. բայց յուսացուած թոշակներն կիսով չափ միայն ձեռք բերուելուն՝ ազգ. արկղն ամեն տարի անոր պակասը կը ընուր. բարեբաղդաբար կտակ ու նուէրներէ անյուսալի հասոյթներ ազգ. արկղին սոյն բեռն թեթեցոյցին :

Ժ. Ազգ. Հիւանդանոցի համար Խորհուրդս կանոնադրապէս վճարած է Գաւառական Ժողովոյ կողմէ որոշեալ գումարն, տարին 75,000 դճկն. նաև, ինչպէս դիտէք, Ս. Լուսաւորչայ եկեղեցւոյն հասոյթներն ալ Հիւանդանոցի Հոգաբարձութեան ձգելէ զատ, Հիւանդանոցի ետևի կողմն եղած երկու խանաքիներու եկամուտներն ալ Հո՞ դարարձութեան թողուած է, վասն այլ և այլ նորոգութեանց նոյն հաստատութեան :

ԺԱ. Ալիւր բրինձի համար Գաւառական Ժողովն որոշած ըլլալով հանդանակուած գումարին համեմատութեամբ բաշխում ընել, այս պատճառաւ Հաշուեկշռոյն մտից և ելեց կողմի գումարներու վրայ տարբերութիւն մի չտեսնուիր. բայց Ասեմ. Թաղուր բաշա Յակոբեան երեք տարի բրինձ զրկած ըլլալով, ըստ կամաց Ասեմ. Բարերարին, յիշեալ բրինձներն առատապէս բաշխուած են աղքատաց և մաս մ'ալ Ազգ. Հիւանդանոց զրկուած է : Հոս յատուկ շնորհակալութիւն յայտնել 'ի դիմաց աղքատաց, նուիրական պարտք կը համարի Խորհուրդս :

ԺԲ. Խորհրդոյս այս վերջին շրջանին մէջ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ օծումն ալ տեղի ունեցաւ, որոյ առթիւ 30,000 դահեկանի արդիւնք ձեռք բերուած ըլլալով, ըստ որոշման Վարչութեան, յիշեալ գումարն դարձեալ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ նորոգութեանց յատկացուեցաւ, նորոգութիւնք՝ որ իստ անհրաժեշտ էին. յիշեալ նորոգութիւնները Մեծ. Կարապետ Սպարթալեանի և Գեորգ Ակասեանի հսկողութեամբ կատարուելու վրայ են, և 30,000 դահեկանի գումարն անոնց յանձնուած ըլլալով, Հաշուեցուցակի ելքի կողմը ամբողջապէս նշանակուած է :

Խորհուրդս ուրախութեամբ կը յայտարարէ նաև թէ այս չորս տարուան պաշտօնավարութեանը մէջ իւր բոլոր անդամոցը կատարեալ համաձայնութեամբը դործած է, և երբեմնական ձախող պարագաներն անգամ արդիւնք չեն Խորհուրդս պաշտօնէից ամնականներու, պարսուց ու տոկոսեաց վճարումներն ընելէ, որով ազգ. արկղին վարկը իւր արժանի բարձր վիճակին հասած է :

Խորհուրդս որչափ որ սոյն ամսոյ սկիզբը իւր շրջանն աւարտած ըլլալով դադարած կը համարուի, բայց Քաղ. Պատ. Ժողովոյ առաջարկութիւնն ընդունելով կը վարէ առժամանակեայ պաշտօն մինչ ց'ընտրութիւն 'ի որ Տնտես. Խորհրդոյ, և կը խնդրէ որ բարեհաճիք յիշեալ ընտրութիւնը կատարել մինչ ց'15 առաջիկայ Օգոստոս ամսոյ. յետ որոյ գործելէ բացարձակապէս պիտի դադրի :

Խորհուրդս իւր այս առժամանակեայ պաշտօնավարութեան մէջ սկսած է բոլորովին նորաշինել Մանուսի վարձուած գործարանն 'ի ծովակողմն Ֆրէնքհանէի. յիշեալ գործարանն խիստ հին և փլուելու վիճակի մէջ գտնուելուն՝ վարձակալը յիշեալ ազգ. կալուածը թողուլ յայտարարած էր. Խորհուրդս Պ. Մանուսի հետ բանակցութեան մտնելով տարեկան 110 օսմ. ոսկի վարձագնով պայմանագրութիւն ըրաւ վարձակալին հետ, և շինութիւնն սկսաւ ընել, որոյ համար հաւանականաբար 350 օսմ. լիբայի գումար մը ծախք պիտի ըլլայ և 110 լիբայի հասոյթ ապահովուած է, փոխանակ 50 օսմ. ոսկի նախկին վարձագնոյն :

Յիշեալ շինութիւնը մեծ մասամբ լմնցած է և կը յուսացուի որ մինչ ց'15 Օգոստոս ամբողջապէս աւարտի :

Խորհուրդս՝ բանելիք 1881-1882 տարւոյ շրջանին ելմտացոյցն ալ Պատուար. Ժողովոյ ներկայացուց յատուկ գրութեամբ, որպէս զի հաճիք հաղորդել Գաւառական Ժողովոյ 'ի քննութիւն և 'ի վաւերացումն :  
Մնամք ամենայն յարգանք

Ա.Զ.Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Արեւադէպ . . . . . ՍՏԵՓԱՆ Յ. ՏԷՏԷԵԱՆ
- Արեւադէպ . . . . . ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՉԱՔՐԵԱՆ
- Գանձապահ . . . . . Մ. ՄԵՐԿԵՐԵԱՆ
- Գեորգ . . . . . ԳԷՈՐԳ Կ. ԱԿԱՍԵԱՆ
- ՂՈՒԿԱՍ ԵՍԱՅԵԱՆ

Զմիւռնիա, 10 յուլիս 1881 :

Պ Ա Տ Ճ Է Ն

1881-1882 ՏԱՐՈՒԱՆ ԵՂՄՏԱՅՈՅԹԻՆ

Մ Ո Ւ Տ Ք		Ե Լ Ք	
Ազգային կալուածներէ . . . . .	425,000	Երկսեռ վարժարանաց . . . . .	150,000
Գետնի վարձերէ . . . . .	12,500	Հիւանդանոցի . . . . .	75,000
Ինթիքալիէ . . . . .	10,000	Պատահական ծախք . . . . .	15,000
Կնքոյ արդիւնք . . . . .	5,000	Պարտուց տոկոս . . . . .	94,000
Ազգային տուրք . . . . .	15,000	Ողորմութիւնք, նաւողջէք . . . . .	7,500
Դպրոցական թոշակ . . . . .	15,000	Գետնի վարձ . . . . .	3,500
Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ . . . . .	7,500	Հրդեհի դէմ ապահովութիւն . . . . .	3,500
	<hr/>	Էմլաքի . . . . .	33,000
	490,000	Նորոգութեանց . . . . .	40,000
Բաց . . . . .	13,000	Դիւանատան ծախք . . . . .	55,000
	<hr/>	Աւելցած պարտուց վճարման . . . . .	26,500
	503,000		<hr/>
			503,000



ՄՈՒՏԲ

Անունը	Մէտր 2012
Կալուածոց եկամուտներէ	1,050,918 75
Ինքնակէտ	45,372 75
Գետնի վարձերէ	36,688
Ազգային տուրքէ	36,683
Պէքոյ արդիւնք	22,921 25
Գարջոցական թոշակներէ	34,456
Կտակ և Նոր	60,738
Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ արդիւնքէ	38,963
Ժառանգական հասոյթէ	9,799
Զանազան աւանդէ	8,686 50
Ժողովներէ	857 50
Զանազան գործերէ շահ	3,579
Քահանայից մշտնջենասօրէ	4,638
Ալեքր բնձի հանգանակութենէ	29,395 50
Գարբին մահանի թաղարի որբերէ	47,184 50
Նոյնէն սոկոս	627 75
Պէրպէրեանի սան արժէքը	24,240
Մանուար տանից . ծախուած անպէտ արժէքը	58,746
Ղարշի-եմալայի արային փոխարէնը	25,410
Փոխառուութենէ առնուած	498
Փոխառութեն	954,398 50
Օժման արդիւնքէ	30,431
1878 յուլ. 1էն պարտատ գրամ 'ի Գրամարկըն	43

Անունը	Մէտր 2012
Ազգային Հիւանդանոցի	639,663
Սան Գեղորէից	27,625 50
Երկսեւ վարժարանաց	22,359 50
Գիւանասան	22,319 75
Օտարաց Նաւորէի և Եղբորութիւն	43,966 25
Սահանեան Ընկերութեան	21,001
Կալուածոց նորոգութեանց	36,939 75
Պատահական ծախք	23,875
Զանազան կալուածոց իճարներու	5,938 75
Էմիլայի	5,345 25
Պարտուց սոկոս	520
Նոր շինութեան	2,493
Պէրպէրեանի սան արժէքը	996
Գարբին մահանի թաղարի որբերու	47,912 50
Պարտաբարանի մուկաթայի	40,444 75
Փոխառուութիւն	380 50
Ալեքր բնձի	42,872 50
Աւանդի վճարում հին և նոր	35,604
Գեղեղնանասան գրամբուն, մանուար արանդէ	15,400
Կալուածոց արդիւնքէ	120
Կալուածներէ առնուած և յետոյ ետ տրուած	582,653 75
Ինքնակէտներէն ետ տրուած	18,503 75
Պարտուց վճարում	8
97ին էմիլայի առհաշիւ	
Ս. Ստեփ. եկեղեց. նորոգութեան առհաշիւ	
Ազգ. Գետնի վարձերէ Ս. Եղբորանոց մասին	
Պարտատ գրամ	

Անունը	Մէտր 2012
224,466	136,735 25
6,000	3,691 50
431,939	263,256 25
155,547 50	94,714 25
21,675 25	43,205 50
10,220	6,289 50
165,485 25	400,733
94,729 50	57,829
8,730 25	5,323 22
70,431 50	42,977 25
195,569	119,005
444,970 50	89,043 25
21,000	42,922
17,184 50	10,444 75
900	545 50
264	160
29,036	17,693 25
14,079	8,533
42,379 50	25,805 75
3,547 50	2,450
1,295 25	785
426	77 50
720,462	438,983 75
6,689	4,054
30,531	18,503 75
625	378 75
2,418,082 50	1,473,617
70,942 50	42,995 50
2,489,025	1,516,612 50

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Պ Ա Ր Տ Բ

1881 ՄԻՆՉԵՐ ՅՈՒՆԻՍ 30

Օճ. մէր 107է	Մէտր 2012
4000	107,000
1500	30,000
416	8,320
80 50	8,613 50
51 82	5,544 75
52	5,564
413 77	42,473 75
20	2,440
5	535
15	4,605
40 20	4,091 50
43 65	4,460 50
	6,552
327 60	2,541 25
23 75	4,460
735 46	78,694 25
697 67	74,650 50
80 38	8,600 50
	2,420
45 31	4,638
304	32,528
251 67	26,929
435 20	44,466 50
411 75	41,957 25
84 25	9,044 75
45	4,605
	6,500
63	6,740
80	8,560
	24,200
	66 30
3858 90	500,832

Օճ. մէր 107է	Մէտր 2012
3959 38	50,832
64 30	7,445
64 8	6,880
79 50	6,535 50
	8,506 50
39 30	8,516
41 6	4,205
54	1,183 75
204	5,457
14 45	4,546
	21,828
20 80	2,700
34 83	2,225 50
3 95	3,727
	422 75
500	53,500
414	11,877
	4,190
50 33	5,385 50
40 33	4,105 50
40 30	4,102
75	8,025
416	42,442
54	5,457
54	5,457
54	5,457
45 20	4,626 50
	37,882
	489 90
	770
5584 81	8135 45
	760,684 50

Փոխարկեալ գումար  
Մարիան Ըամլը Սարգսեան  
Լիթոր Բաակուալ .  
Վանցի հճի. Մանուկ .  
Մարգարիտ Պետրոսեան  
Տիգրան ՕՏ. Օտարաշէնեան .  
Վառվառա Յակոբեան .  
Ռշտրցի Աննա .  
Գլխոյ Կարապետեան .  
Մանուկ ՕՏանէսեան .  
Քարթլի Միլիթ Թոս .  
Նեքրեա Քրիզոբորեան .  
Օրբորդ Խ. Քէօլէեան .  
Տիկին Կարապետ Տեառեան .  
Պրնովայի Եկեղեցւոյ .  
Յովհ. Էփ. Սպարդուեան ըստ կտակի (տակարար վճարուած է մինչ 15 նոյեմբ.)  
Երեսարէթ Եղեանեան  
Տիկին Մարթա Արթիմեան  
Ստեփան Մէնէֆէեանի որբոյ .  
Թագուհի Չիլիմիկ ՕՏանէսեան  
Տիկին Արիւմիկ Կառնեան .  
Մարիամ Արթիմեան (տակարար վճար' մինչ 22 օրս)  
Հռիփիմէ Չափանակիսեան .  
Յուսիսեան Սիմեան .  
Սրբուհի Աւետիկեան .  
Վառվառա Աւետիկեան  
Մարկիմա Քէօլէեան  
Հոյկ. Յ. Կարապետեան ըստ Պայմ. Լր. թ. 403  
Գեղեղնանոց անոց  
Ղարշի ետեան արային արժէքը .

Թիւ 3.

**ԿԱԼՈՒԱԾՈՑ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ**

1878 ՅՈՒՐԻՍ 1 ԷՆ ՄԻՆՉ 1881 ՅՈՒՐԻՍ 1

	Անցումի սրբալի
Երկուսն փարձարանաց	41,349 50
Հետադրատան	12,365 25
Շահին և Սէլվիլի խաներու և խանութներու	17,253
Ֆէրիանէի մէջ տուններու և քաղկնոյին	21,815
Բալուցի տան	1,247 50
Մանր մունր ծախք այլ և այլ կալուածոց	3,881 50
Գ. Պէրկամալեան յիշատակ տան	2,036 50
Տէօրթ եօլ աղզն սրճարանին և տան	2,704 25
Էլէնօղի Աճնթօին	415
Իմամ և քաթրըճի և Նազլե փողոցներուն փուռերուն և սրճարանի	8,356 75
Աղքատասիրաց Ընկերութեան Գեղարանին	9,690
Հաճի Միլլամարին վարձատրութիւն	1,770
Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ	3,112 25
Սրբիբօ Լազարիի և Խրոստարիի տուններուն	450 75
Առաջնորդարանի	6,793 75
Մեծ Վէզիր և Փօքր և Արիտ խաները մթերանոցներու և Պաքրճեանի աղջ. խանութին	6,117
Լորանթային	573
Մէնէֆէի տան	1,302 50
Չնկըրլարայի մէջ	14,828 50
Շահատէի տան	473
Մովճի խանի	2,674 25
Օսմանիէ փողոցի սրճարանին	1,392 25
Գպրոցի կից արտային	2,998 50
Օձման սոթի	1,885 25
<b>ԸՆԴՀԱՆՈՒՄ</b>	<b>165,485 25</b>

31

**ՄԱԼՄԱԵՑ ՀԱՇՈՒԿԱԿՇՒՈՒ ՍՈՒՍԵՓԱՆՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ**

1880 ՅՈՒՐԻՍ 6 ԷՆ ՄԻՆՉ 1881 ՅՈՒՐԻՍ 31

Մաս	Անցումի սրբալի	Ելիք	Անցումի սրբալի
<b>ՄՈՒՒՄ</b>			
Մով, տնանկաց, խունիկ, կանանց, Մատուցի և կանանց տնանկի թաղախներէն	27,297 75		16,140
Չանաղան արդիւնք. — Պատիկ և Պաշտօնէ	7,932 25		4,250
Թաղան արդիւնք	14,422 25		9,600
Մկրտութեան արդիւնք	3,452 25		792
Չանաղան մանր եղելութիւններէ շահ	53,104 50		2,640
Հաւաքելի	8,208 25		660
	7,881		2,000
<b>ԸՆԴՀԱՆՈՒՄ</b>	<b>69,193 75</b>		<b>16,760 25</b>
<b>ԵԼԻՔ</b>			
Տնանկաց 12 ամսական			2,947
Լուսարարի 12 ամսական			3,997 50
Երեք ժամկէտներու 12 ամսական			59,786 75
Մովճի կնիկն 12 ամսական			4,526
Չայնաւոր դպրատնին ամսականը, 10 մէջտէն 8 ամսական			7,881
Չայնաւոր տիրացուն ամսականը, 2 1/2 մէջտէն 8			69,193 75
Փամկէտներու, Լուսարարի, քահանայից Ծննդեան և Չայնաւոր տնանկացի			
463 1/2 օխա մով փոխարէն			
Եկեղեցւոյ դրան նորոգութիւն			
Եկեղեցւոյ մէջ ապակիներու			
Երկու Աւետարանի արձանի շինողէք Մճաւ, 24			
Չանաղան մանր ծախք. — Խ.Է. ամուխ, բէթբոլ, շերա, խունիկ, առէլ, շապիկի և			
Պատրաստ դրամ ցուցակաւ			
Հաւաքելի			

# ՅՈՒՑԵԿ ԼՄՍԵԿԵՆԵՑ

Լուսարար Տէր Յովհաննէս քահանայի	400
Չայնաւոր Գարապետին	330
Չայնաւոր Տիրացուն	82 50
Ժամկոչ Աէյալն	300
Ժամկոչ Տճի. Արապետին	250
Ժամկոչ Սևադոյնին	250
Մովճի կնկան	66
	<u>1,678 50</u>

Յ Ո Ի

Տ Ա Մ Ն Ա Մ Մ Ե Ա Յ Ե Լ Ե Ի Մ Տ Ի Յ

Ս Կ Ս Ե Ա Լ 1880 Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Բ 1 Ի Ե

Ա Ր Գ Ի Ի Ն Ք	Ա ն զ ու չ ս ր ա չ
Տնտեսական Խորհրդէն առնուած տասն ամսական	62,500
Եկեղեցւոյ զանձանակէն և թաղախէն արդիւնք . հարսանիքներէ , հսկում և մնմ	18,878 15
Տարեկիքէ հաւաքուած	17,727 10
Տնտեսական Խորհրդոյ քով գտնուած 1,000 Մէճիտի տոկոսէն	2,607
Հիւանդանոցիս Տարեկարձի հանդէսէն	634
Տասն ամսուան Խանաքիի քրայէն	5,610
Թրանդ-Ատլանտիք Ապահովութեան ընկերութենէ նուէր 10 Օսմ. ոսկի	1,760
Քուին Ապահովութեան ընկերութենէ նուէր 20 Անդղ. ոսկի	4,095
Պ. Մատանեանի ձեռք քօսթի Սթերոյէն նուէր	176
Էօտէմիշի Նազիկ Խաթունի կտակէն	1,320
Ս. Չմիւռնակիսեանի տարեկիքէն 12 ոսկի	2,124
Տուտու Մերկերեանի տարեկիքէն	1,892
Աւետիս Աւագեանէն՝ եղբորը համար տարեկիք	1,320
Գասպար Տրդատեանէն տարեկիք՝ ձօն եղբորը համար	1,320
Սիմոնաքեանէն՝ եղբորը տարեկիքին համար մնացորդ 1,000 լըշէն	400
Վ.Ճարող հիւանդներէ	1,653 10
Մեռեալ հիւանդներէ մնացած ստակ	1,841
Ծախուած արծաթ , պախըր , հինցած լաթեր , և մեռեալներու թողուցած լաթերէն	4,528 15
Արձանագրութեան տետրակէն հասոյթ	2,902 30
Գեղարանիս ծախուած զեղերէն	7,005 10
	140,294 10

Յ Ա Կ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Յ Ի

Մ Ի Ն Չ Ե Ի 1881 Յ Ո Ի Լ Ի Ս 31

Ծ Ա Խ Ք	Ա ն զ ու չ ս ր ա չ
Ծախու առնուած 2884 օխա միսի համար	21,793
» » 5980 » ալիւրի համար	20,433 10
» » կանանչեղէն և թօմաթէզի ջուր	3,105 30
» » արդար եղ , սուսամ եղ , սապուն և զէյթին եղ	3,708 10
» » 11 չուվալ բրինձ	3,120 20
» » նօխուտ , ֆասուլեա , պէօրիւճէ , բաթիթէս և սոխ 1277 օխա	2,581 10
» » եէմիշ , պալ , թահին կայն	967 20
» » 150 օխա 100 տրմ. դինի	525 20
» » սև և կանաչ զէյթին 236 <sup>3</sup> / <sub>4</sub> օխա	1,300
» » 248 հատ ֆրանձէլա	369 10
» » 78 <sup>1</sup> / <sub>2</sub> դանթար քէօմիւր	2,185
» » 128 <sup>1</sup> / <sub>2</sub> օխա թիւթիւն	2,718
» » 292 <sup>1</sup> / <sub>2</sub> » մախարա	1,654 20
» » 36 <sup>1</sup> / <sub>2</sub> » խահլէ	881 30
» » 162 » շաքար	1,276
» » 1085 <sup>1</sup> / <sub>2</sub> » կաթ	2,518
» » 216 <sup>3</sup> / <sub>4</sub> » պանիր	2,493 30
» » աղ , պիպէր , սիտոր , լեմոն , հակիթ , քացախ , խունկ , թարչին , պահար և	650
» » 278 չէքի և եիւքով առնուած փայտ	8,049 30
» » հանդերձեղէն , եօրդան , տէօշէկ , բամպակ , քարուլի , դերձան , ասեղ և	7,590
Փուրունձիին եփողջէք և շաղելու համար	964
Լուացարար կնոջ	1,373
Կաթնտու , սպասաւոր , և աղքատ հիւանդներու տրուած ստակ ճամբորդութեան համար	683
Թէնէքէճիլի , օձախները մաքրելու , քիրէճ , պօեա , և մանր նորոգութեանց համար	2,279
Ժամկոչի՝ ննջեցեալի համար	95 10
Մոխիրի համար	32
Մոմի համար 56 <sup>210</sup> / <sub>400</sub> օխա Եկեղեցւոյ համար	2,224
Հիւանդանոցին ապահովութեան համար քուին ընկերութեան	4,095
Փրջա , չոքարա , բերոն , զգալ , զանակ , չանախ , աւել , քուբա , ֆիլձան , քեասէ և	1,877 5
11 մետուկ բէթրոլ	987
Հիւանդանոցիս պաշտօնեաներու և սպասաւորներու ամսական	12,633
Խաչի շինողջէքի համար	297
Սքիթօ , սքարմաչէթ , սիկարի թուղթ , իտարէ և	440
Մակար Վարդապետին թողուցած պարտքը Արձանագրութեան տետրակին համեմատ	5,432
Նախորդ Հոգաբարձութեան դեղի համար ձգած պարտքը Արեւիբորուլօին	825
Գեղարանի համար առնուած զեղ	11,953 30
78 չէֆթ բապուճ , հողաթափ և փաթուքլա	1,772
Ղազանները շինելու և պախըրներու զալային համար	2,144
Տետրակի , թուղթի , փոստայի կայն	234
Տնտեսական Խորհրդին միջոցաւ Խանաքիին եղած նորոգութիւն	1,782
	140,043 5

1881 Օգոստոս 17ին Հիւանդանոցիս մէջ գտնուած անձանց թիւը  
և ցուցակը:

Պաշտօնեայ և սպասաւոր	7
Սպասուհի	2
Հիւանդ	18
»    ևս	2
Սնկար և ծեր	10
Սնկար կին	13
Խնայար այր	19
»    կին	4
	<hr/>
	75

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՌԻՍՈՒՄՆԵԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Գերագատիւ Սրբազան Նախագահ  
Ազգային Ժողովոց:

Արդէն յայտնի է, որ Աստուծական Խորհրդոյս տարեկան պաշտօնավարութեան շրջանը ներկայ ամսոյս սկիզբը  
բացառ. ուստի պարտք կը համարի իւր գործողութեանց արդիւնքը համառօտակի տեղեկագրել Ձեր Սրբազնու-  
թեան և Ձեզմով Պատ. Բաղարական Ժողովոյ ուշադրութեան ներկայել:

Աստուծական Խորհրդոյս 1880 օգոստոսի 20ին Ձեր Սրբազնութեան կողմէ ստացած հրամանագրին համաձայն  
իւր պաշտօնը շարունակեց և հոգ տարաւ ՚ի գործ դնել իր յորինած կանոնադրին ու Ծրագիրներն որ Պատուար.  
Բաղարական Ժողովոյ միջոցաւ Գաւառական Ժողովոյ հաւանութեան ենթարկուած և վաւերացած էին:

Սակայն նախորդ տարւոյն վերջի ամիսները վարած պաշտօնին փորձառութեամբ, Աստուծական Խորհրդոյս  
նկատելով որ ազգային վարժարաններու աւելի կանոնաւոր ուղղութիւնն և իր ընելիք սնորհնութեանց անմիջական  
գործադրութիւնն ապահովելու համար Տեսչութեան մը կարօտութիւն կայ, արժան զատեց այդ պաշտօնին կոչել  
Պ. Մ. Մամուրեանն, որ վերջապէս իր թախանձանաց զեջանելով յանձն առաւ միայն առ ժամայ կերպով ըն-  
դունիլ զայն և իր ընտրութիւնն Ազգ. Վարչութեան հաւանութիւնն ստացաւ:

Աստուծական Խորհրդոյս գրեթէ ամեն շաբաթ նիստ ընելով Ձեր Սրբազնութեան նախագահութեամբ, ազգ.  
վարժարանաց ներքին բարեկարգութեան և յատաջգիմութեան մասին զանազան սնորհնութիւններ բրած է, տնօ-  
րէնութիւններ՝ որ իր Ատենագրութեանց տուժարին մէջ արձանագրուած են: Աւելորդ կը համարի ասոնք մի առ  
մի նշանակել, և բաւական կը սեպէ միայն յայտնել որ, մինչդեռ տեղոյս ազգային վարժարանաց մէջ Պատուար.  
Տեսչական Խորհրդոյ սնորհնութեամբ հարկ եղած նորոգութիւնները կ'ընէր, մինչդեռ կարգ մը զաստուծներու  
տեղ, որ կամ անկարող էին և կամ հրաժարած, ուրիշներ կը կարգէր, ոմանց ամսականներուն վրայ վերադրու-  
թիւն մ'ընելով, Պ. Պօլսէն, Երուսաղէմէն, Բարիզէն այլ և այլ հայերէն և Ֆրանսերէն զասական գիրքեր և  
աշխարհացոյց տախտակներ բերել կուտար, ստեպ վարժարանները կ'այցելէր, անոնց ներքին ընթացիկ և պիտոյնց  
վրայ Տեսչութեան հետ կը խորհրդակցէր, զպրօցական խնդիրներու մասին բացատրութիւններ կը խնդրէր, Օ.  
բաղրութիւններն աչքէ կ'անցընէր, շատ անգամ զաստուծութեանց ներկայ կը գտնուէր, ամեն ամսու վերջերն ամ-  
սականներն անվերայ կը վճարէր, որով պարտաւորութեանց անթերի կատարումն զաստուծներն աւելի խստու-  
թեամբ պահանջելու իրաւունք կ'ունենար, մինչդեռ Հռիփսիմեան վարժարանի Հողաբարձու հի Տիկնայց հետ զըզ-  
րոցական պիտոյնց վրայ կը բանակցէր, անփոյթ չէր նաև թղթակցելու Վիճակիս Թեմական Խորհրդոյն հետ,  
կրթական խնդիրներու մասին, անոնց զպրօցներուն յարմար սպեալ ծրագիր և հրահանգներ ուղղել, երբեմն  
ապօստոսած գիրքեր և երբեմն զաստուծներ ուղարկել և յատկապէս Սէնթմէնի գպրօցին ձրի աշխարհացոյցներ,  
և վերջապէս ՚ի գործ դնել ինչ որ իր պատասխանատուութիւնը կը պահանջէր և իր կարողութիւնն ու զպրօցա-  
կան Ելմացոյցին միջոցները կը ներէնէ, յօղուտ ազգային վարժարանաց:

Ասումնական Խորհուրդս՝ եթէ քիչ շատ յաջողեցաւ իր պաշտօնին մէջ, պատճառն՝ ոչ այնքան իր գործունէութիւնն որքան Ձեր Սրբազնութեան լուսաւոր խորհուրդներն էին և Ազգ. Արչութեանդ աջակցութիւնն, որով կարող եղաւ իր առջև ելած դժուարութեանց յաղթել և յարատեւել, իր իրաւասութեան սահմանին մէջ մնալով, և պահանջելով որ իւրաքանչիւր դպրոցի պաշտօնեայ իր սահմանին մէջ իր պարտքը կատարէ :

Այ նուազ ձեռնառու գտնուեցան՝ Ասումնական Խորհուրդոյ ծանր պաշտօնը թեթեւեղութեամբ՝ Ազնիւ Հոգաբարձուհիք, որ Հռիփսիմեան վարժարանի ներքին բարեկարգութեան, մաքրութեան և ձեռագործի վրայ կը հսկէին, ստեպ այցելելով Հռիփսիմեան վարժարանը, Ազնիւ Հոգատար Ընկերութիւնն, որ ՅՁի չափ աղքատիկ աղջկանց ամառուան ու ձմեռուան զրկստեղծն և զրական պիտոյքը կը հոգար, նորակազմ Արթասէր Ընկերութիւնն, որոց մի քանի անդամներն գասատութեան պաշտօն ստանձնած էին անձնուիրաբար, Ասեմ. Սպարթալեան Յովհաննէս էֆէնտին, որ ստեպ կ'այցելէր գասարաններն և գասատութեանց ունկնդիր կ'ըլլար, բանիւ և պարգևներով կը քաջալերէր աշակերտներն և 73 կարօտեալներու հանդերձեղէնը կը հոգար Զատիկի և Ծննդեան տօներուն առթիւ, ինչպէս նաև Պատ. Քաղաքական Ժողովոյդ կողմէ կազմուած Մասնաժողովն, որու անդամներն էին, Մեծ. Ստեփան Թէստէրէճեան և Մ. Բաբաղեան, զաս մ'որորմասէր ազգայնոց հանդանակութեամբ, Մեծաշուք Եսայեանց Գրիգոր, որ նոյնպէս կարօտ աշակերտուհեաց և վարժուհիներուն համար շրջազրկեստի ամբողջ նիւթը մատակարարեց, Մեծ. Էլմասեան Պ. Ստեփանն, որ դաշնակ մը պարզեց : Բայց յատուկ շնորհակալեաց արժանի են մանաւանդ Մանչեսթրի աշուուսիրտ ազգայինք և Պ. Օլիվօ, որ Ասումնական Խորհուրդոյ առաջարկութեան վրայ, հանդանակութիւն մը բանալով, գոյացած 46 անդլիական ոսկին զրկած են՝ աղքատիկ աշակերտաց զրաւոր և այլ պիտոյքը հայթայթելու համար :

Ասումնական Խորհուրդս իր տեսած աջակցութիւնն և ստացած նուէրները յիշատակելով՝ նպատակ չունի դուրսնել շտայլել, այլ միայն երախտագիտութեան պարտ մը կատարելով, իրրե օրինակ ընծայել այնպիսի անձերու որ՝ թէև կարող, անսարքեր կ'երևին մեր կրթական հաստատութեանց առջև, որոցմէ կախումն ունի Ազգին ապագան, և այն ծնողաց՝ որ ցարդ կը դժկամակին վճարել անգամ իրենց զաւակաց բաժին ընկած չափաւոր թոշակը :

Ասումնական Խորհուրդս ամեն ջանք 'ի գործ դրաւ որ ազգային վարժարանաց ծախուց դումարն մտից գումարն ին հետ հաւասարակչիւ պահէ, ծրագիրներն անթերի գործադրելու պայմանաւ, և գոհութեամբ կը յայտնէ որ յաջողեցաւ այս նպատակին մէջ : Այս առթիւ՝ իր շնորհակալեղը կը յայտնէ նաև Պատ. Տնտեսական Խորհուրդոյ, որ Գաւառական Ժողովոյ կողմէ սահմանուած տարեկան գումարն, զըշ. 150,000 ամսէ ամիս անվրէպ վճարելովն, ազատ պահեց Ասումնական Խորհուրդս զրամական ներդրութենէ, որու հետևանքը պիտի ըլլար իր տնօրէնութեանց անգործադրութիւնն և գպրոցական խանդարում, ուստի և յառաջդիմութեան ընդհատում :

Ասումնական Խորհուրդս, առանց մանրամասնութեանց մտնելու, իր Հաշուէտումարէն քաղելով՝ կը յայտարարէ թէ երկուս վարժարանաց ազգովին սահմանուած 150,000 դուրուչէն, բոլոր պաշտօնէից ամսականաց վճարման համար յատկացած գումարն է զըշ. 143,595 1/2, իսկ մնացած գումարին հետ ընդունած զրամական նպատակները ծախք ըրած է վարժարանաց այլ և այլ պիտոյից համար, ինչպէս գասական զրեանց, աշխարհացոյցներու, դժագրութեան պատկերներու, աղքատիկ աշակերտաց ձրիպպէս տրուած նիւթերու, մարմնամարզութեան գործիներու նորոգութեան, թատրոնի և տարեկան հանդէսի պատրաստութեան համար և այլն :

Ասումնական Խորհուրդս վարժարաններու վիճակին, քննութեանց և այլ կարգադրութեանց մասին Տեսչութեան կողմէ սու ինքն ուղղեալ մանրամասն տեղեկագիրը Ձեր Սրբազնութեան հաղորդելով 'ի տեղեկութիւն, աւելորդ չհամարիր յաւելուլ որ մի քանի պէտքեր կան ստիպողական, որոց կարօտ է մանաւանդ Հռիփս. վարժարանը :

Նախ, Ծաղկոցն անյարմար և անբաւական է 115ի չափ աշակերտուհի պարունակելու, այնպէս որ՝ վերջին շքրջանին մէջ՝ հարկ եղաւ այդ սրահէն 16ի չափ աշակերտուհի փոխադրել Նախակրթարանի սրահն, որ արդէն հաշիւ կը բաւէ 80ի չափ աշակերտուհեաց :

Բ — Բաւական թուով գասարաններու պակասութիւնն օրէ օր աւելի զգալի կը լինի և խանդարման պատճառ, քանի որ 10 կարգերու համար, որով կը բաղկանան Հռիփսիմեան սանուհիք, միայն վեց գասարան կայ, միասին

հաշուելով և երկու սրահներն, Ասումնարանի և Նախակրթարանի, ուր երբեմն երկու դասատու՝ մի և նոյն ժամանակը դասախօսելով, շփոթութիւն և անկանոնութիւն կը պատճառեն, նոյնպէս յատուկ թանգարանի մը պակասութիւնն, կանոնաւոր հսկողութեան և այցելուներու պատշաճ ընդունելութեան արգելք կը լինի :

Գ — Զբօսավայրի չգոյութենէ աշակերտուհիք զրկուած են՝ որոշեալ ժամանակներ, պէտք եղածին պէս, հանդիստ վայելելու և մարմնամարզութիւն ընելու :

Դ — Թէ Հռիփսիմեան և թէ Մեսրոպեան վարժարանաց զրասեղաններն, արդէն իրենց հին ու տձև շէնքով անյարմար, մծ մասամբ թոլորովին խաբխած են և ուսանողաց առողջութեան վնասակար, այնպէս որ եթէ կարելի չէ ամբողջակի նորեր շինել տալ, պէտք է դոնէ մծ մասամբ նորոգել :

Ե — Բնական պատմութեան, բնագիտութեան, իրաքանութեան վերաբերեալ զանազան պատկերներ, գործիներ, առարկաներ և ուրիշ օժանդակ միջոցներ կարևոր են :

Ասումնական Խորհուրդս այս պիտոյքէ զատ՝ ուրիշ պիտոյքներ ալ կը տեսնէ, սակայն ազգային արկղին վիճակն նկատելով՝ զանց կ'ընէ յիշատակել, միայն Ձեր Սրբազնութեան ուշադրութիւնն հրաւիրելով նախորդ գպրոցական ելմտացոյցին վրայ որ անբաւական է նոր նոր պիտոյից առջև, իր խօսքը կը կնքէ, իր սրտագին շնորհակալեղը յայտնելով Ձեր և Ազգ. Արչութեան վստահութեան և համարման համար, որով արժան դատեցիք յանձնել մեզ այսպիսի ծանր պաշտօն մը, պաշտօն՝ որմէ պարտինք հրաժարիլ, զրեթէ մէկ ու կէս տարի զայն վարելէ ետք, ըստ մեր կարողութեան, փափաքելով որ աւելի ձեռնհաս անձինք մեր տեղն ընտրուին :

Մ'նամք խորին յարգանք Ձեր Սրբազնութեան :

ԱՆԴՍՄՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅ

Արեւուպէր ԹՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՔՍՈՒՏՕԳ  
Արեւադղիք ՄԵՍՐՈՊ ՍԻՄՈՆԵԱՆ  
ԹՈՎՀԱՆՆԵՍ Ս. ՉԱՔՐԵԱՆ  
ԹԱՊՈՒ Գ. ՎԷՄԵԱՆ

Զմիւռնիա, 12 յուլիս 1881 :

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ի

Դ Ա Տ Ա Ս Տ . Խ Ո Ր Հ Ր Դ Ո Յ Ե Ջ Գ . Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ջ Մ Ի Ի Ռ Ն Ի Ո Յ

Ա Ռ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ

Ջ միւռնիս Գաւառիս Ազգ. Վարչութեան Գատաստանական Խորհուրդս իւր պաշտօնավարութեան ձեռնարկած է 1879 սեպտեմբերի 23ին և մինչև ցայսօր շարունակած է :

Այսչափ միջոցիս մէջ 91 նիստ ըրած է , և 110 խնդիր տեսած և արձանագրած է իւր տումարին մէջ . Իւր նիստի օրերն են երեքշաբթի և ուրբաթ օրեր , եզանակաց համեմատ փոխելով նիստի ժամերն :

Որովհետև Խորհրդոյս պաշտօնն է Ազգայնոց մէջ պատահած որ և իցէ վէճերն երբ ներկայանան քննել , ստուգել և իրաւունքն որոշել ու վճռել , բնականապէս այս տեսակ խնդիրներ ներկայած են մեզ , որոցմէ ոմանք յաջողած ենք լուծել և խողաղութիւնը վերահաստատել վիճողաց մէջ , և ոմանք մեր ձեռնհասութենէ վեր գլտնուելուն հաղորդած ենք Պատ. Քաղաքական Ժողովոյդ : Խորհուրդս պէտք եղած ատեն կարևոր նամակներ ուղղած է թէ վարչական ճիւղերու և թէ մասնաւորներու :

Խորհուրդս իրեն ներկայացած բաղմամբ խնդիրներն , ըստ որում մեծաւ մասամբ ընտանեկան ներքին կենաց կը վերաբերին , չէ կարող յականէ անուանէ և մանրամասնօրէն նշանակել իւր Տեղեկագրին մէջ , այլ բաւական կը համարի , զանոնք ըստ ամենայն հանդամանաց իւր Ատենագրութեանց մէջ արձանագրելէ զինի , միայն ընդհանուր տեսութեամբ ակնարկ մի ձգել բոլոր խնդիրներու տեսակաց վրայ , որք են :

Ազգայնոց ընդ ազգայինս և երբեմն ազգայնոց ընդ օտարազգիս ունեցած վէճերը առնելիքի և տալիքի ևա :

Ազգայնոց մէջ պատահած ժառանգական կնճառից խնդիրներ :

Այր և կնոջ մէջ պատահած ինչ ինչ խնդիրներ , որք երբեմն կրնան ծանր կերպարանք առնուլ , ինչպէս այրաթողի և կնաթողի դժուարին խնդիրներ :

Այս օրինակ խնդիրներով զբաղած է ահա Խորհուրդս , որոցմէ շատերն յաջողած է լուծելու վիճողաց մէջ իրաւունքն որոշելով , յորդորելով և հաշտութեամբ վերջացնելով :

Եղած են և կան խնդիրներ ալ , որոց լուծումն անկարելի դարձած է երբ ամբաստանեալը չէ յօժարած Խորհրդոյս նիստին ներկայանալ : Այսպիսի անձինք ունկնդիր չեն ոչ հրաւերի և ոչ իսկ քահանայի և կամ Խորհրդոյս անդամներու երբ անձամբ երթալով կը յորդորեմք որ զան ներկայանան յԱռաջնորդարան , որպէս զի իրենց ցան ու վիշտն իմանալով պարտ ու պատշաճ դարմանը տնօրինուի :

Տեղեկագրիս հետ միասին կը կրեմք նաև մեր երկամայ պաշտօնավարութեան շրջանն , և մատուցանելով մեր հրաժարականն մնամք վասն բարօրութեան Ազգիս բարեմաղթու :

Ա.ՋԳ. ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Ատենագրոյիք	ԼԻԵՏԻՍ ՔԱՀԱՆԱՅ	Արեւապետ	ՍԱՐԳԻՍ ՍՈՒՔԻՆՍԵԱՆ
Անդամ	ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅՑ ԳԵՂՈՂԵԱՆՑ	Անդամ	ՃԱՆԿԻ ԷԼՄԱՍՅԱՆ
			ՍԻՄՕՆԱՔԻ ՍԻՄՕՆԱՔԵԱՆ

Ջ միւռնիս , 23 Օգոստոս 1881 .



2013

« Ազգային գրադարան »



1702/ NL0051054



